

ՂԱԻԹ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ  
[ՊՐԱԿՔ Ա]

Պիտաւորութիւն Արիստոտէլի ի Վերլուծականն՝ է բուն հարկանել զպարզ հաւաքմանն: Այլ եթէ է դիտաւորութիւն Առաջնոյ վերլուծականաց պարզ հաւաքման, զիա՞րդ վաղվաղակի ի սկզբանս ասէ, Նախ ասել արժան է՝ զի՞նչ եւ յաղագս որո՞յ խոհմունս. եւ եթէ սակս ապացուցի եւ մակացութեան ապացուցականի: Եւ ահա վաղվաղակի ի նախերգանէս ապացուցի յիշումն առնէ:

Առ որս ասենք, եթէ ոչ ինչ անտեղի է՝ եւ յաղագս պարզ հաւաքման ելոյ դիտաւորութեան, ճառել եւ յաղագս ապացուցի, եւ զնոյն դիտաւորութիւն գոլ եւ յաղագս ապացուցի: Որպէս յորժամ ոք անտառահարութեան մասն ասիցէ զնաւակառութիւն. զի յաղագս նորա լինի: Եւ դարձեալ երակահատութեան ասիցէ զառողջութիւն գոլ կատարումն. զի սակս նորա եղանի: Բայց ուսոյց եւ այլ պատճառս, եթէ որպէս Վերլուծականացն պարզաբար կատարումն ապացոյցն է: Իսկ որպէս յԱռաջնոց վերլուծականացն գիտութեան բուն հարկանել զպարզ հաւաքմանն, տայ եւ զմիւս եւս պատճառ, եթէ որպէս եւս ըղծալի կամելով առնել զառաջիկայ շարագրածս, զպիտանացուն՝ որ ի նմայն՝ յառաջագոյն քարոզէր, զի պիտանացու է պարզաբար հաւաքումն: Այս է քննութիւն պարզաբար հաւաքման յապացուցական հաւաքմանն: Քանզի պարտ է գիտել, եթէ մի իրողութիւն ձայնեաց Արիստոտէլ պարզաբար հաւաքմանն, եւ ապացուցականումն՝ զչորս ճառս վերլուծականացն պատուեալ. եւ զպարզաբար հաւաքումն շարամերձելով՝ զնա լաւագունումն տեսակումն. այս ինքն ապացուցականում պատմելոց, զապացուցականն շարամերձելով ընդհանուր սեռումն:

Եւ պարտ է գիտել՝ եթէ հինգ են տեսակք հաւաքմանց՝ ապացուցական, տրամաբանական, ճարտասանական, իմաստական, քերթողական, որ եւ առասպելախառնումն: Եւ հինգ են վասն այսր պատճառի. որոյ անուն եւ դիմէն, կամ ամենեւին ճշմարտեն, եւ լինի ապացուցականն, կամ ամենեւին ստեն, եւ լինի քերթողականն. եւ կամ է ինչ որ ճշմարիտ, եւ է ինչ որ սուտ: Եւ թէ հաւասարք են միմեանց ճշմարիտն եւ սուտն՝ լինի ճարտասանականն. եւ ճարտասանականումն միայնում ասին գոլ կացմունք եւ վէճք եւ անվէճք, առ ի նոցանէ միայն եղանակելիք: Իսկ եթէ առաւել է ճշմարիտն քան զսուտն՝ լինի տրամաբանականն. իսկ եթէ առաւել է սուտն քան զճշմարիտն՝ լինի իմաստականն:

Բայց ոմանք ասեն՝ եթէ երեք միայն են տեսակք հաւաքման, ապացուցական, տրամաբանական, իմաստական. քանզի լծեն ընդ տրամաբանականումն զճարտասանականն, իսկ ընդ իմաստականումն զքերթողականն: Եւ ստորանիւթեն այսպէս. երեք միայն են տեսակք. քանզի հինգ են ամենեքեան՝ որովք ճանաչենք ինչ եւ գիտենք, զգայութիւն, երեւակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք: Քանզի գիտելին՝ կամ արտաքոյ է, կամ ի ներքս. բայց է մասնական ամենայն իրօք. վասն զի զգայութիւնք զմասնականացն բնաւորեցան բուն հարկանել: Այլ եւ երեւակայութիւն զմասնականացն բուն հարկանէ. քանզի զոր ինչ առնու ի զգայութեանց՝ զայն պահէ. վասն որոյ եւ երեւակայութիւն յորջորջի, այս ինքն՝ երեւեցելոցն կացումն: Իսկ կարծիքն զընդհանուրսն գիտեն, նոյնպէս եւ տրամախոհութիւն եւ միտք. այլ կարծիք՝

առանց գիտելոյ զպատճառսն. իսկ միտք ի վեր քան զպատճառսն. իսկ տրամախոհութիւն ըստ պատճառաց:

Արդ երեք են տեսակք հաւաքման, այսպէս եւ ըստ այսմ յեղանակում: Ոչ զգայութիւնք եւ ոչ երեւակայութիւնք, քանզի եւ նա ի զգայութեանց առնու, եւ ոչ միտք հաւաքեն, որպէս ինքնատեսօղք ամենայն իրաց. այլ եւ ոչ կարծիք, քանզի կարծիք՝ զեզրակացութիւն միայն գիտէ. Բայց միայն տրամախոհութիւն է, որ հաւաքէ: Եւ սա կամ ի միտ առնու զնախադասութիւն, այս ինքն է զառաջարկութիւն, եւ առնէ զապացուցական՝ որ ի պատճառաց՝ եւ յառաջնոց. եւ կամ ի կարծեաց, եւ առնէ զտրամաբանականն, եւ կամ ի զգայութենէ, եւ առնէ զմասնականն: Ապա երեք ուրեմն են տեսակք հաւաքմանն:

Յետ որոյ ասացուք զպիտանացուն: Արդարեւ պիտանացու առաջիկայ իրողութիւնս յապացուցական հաւաքմանէ: Քանզի որ ոչ կարօղ գոյ գեղեցիկ գրել՝ այնպիսին բնաւ իսկ ոչ գիտէ գրել. նոյնպէս եւ ոչ գեղեցկաբար հաւաքել այն՝ որ ոչ գիտէ զի՞նչ է պարզաբար հաւաքումն: Իսկ ասացուցական հաւաքումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան, ի տեսականն եւ ի գործականն. որպէս զի <մի> զցուցեալսն ի տեսականումն ճշմարտապէս՝ ճշմարիտ կարծեսցուք. որպէս զի մի զսուտ գիտութիւն ընկալցուք եւ մի չար ինչ գործեսցուք:

Արդ պիտանացու առաջիկայ իրողութեանս պարզ հաւաքման՝ եւ զայլ ինչ ի ձեռն այլոյ գտանել: Քանզի ոչ զամենայն ինչ թագոյց բնութիւնս, զի ոչ կարօղ գոյր գտանել ինչ որ, եւ ոչ դարձեալ զամենայն ինչ յայտնի արար, զի ոչ որ էր ապա որ ի խնդիր անկանէր: Այլ է ինչ՝ զոր թաքոյց եւ է ինչ՝ զոր յայտնեաց. վասն որոյ խնդրելն է յուզելն եւ գտանելն: Արդ եկն էանց ի մէջ հաւաքումն, որպէս զի յորոց եցոյց բնութիւնս, գտցէ զայն՝ զոր թաքոյցն. զօրէն յուզականացն ասացեալ շանց, որք գիտեն, այս ինքն ի շաւղացն եւ ի հոտոցն գտանեն զորջս զազանաց:

Պիտանացու առաջիկայ իրողութիւնս՝ եւ ի մեր ինքեանց գոյութիւնս. քանզի մարդ միայն բանաւոր յէիցս՝ է հաւաքօղ էիցս: Վասն զի այլ գոյութիւնք ոչ հաւաքեն. ոմանք որպէս ոչ կարելով, եւ ոմանք որպէս ոչ պէտս ունելով: Քանզի երկնայինքն, որպէս ինքնատեսօղք իրողութեան, ոչ պէտս ունին հաւաքման: Իսկ անասունք, որպէս ոչ կարօղ գոլով. վասն զի անգիտանան զընդհանուրսն: Քանզի թեպէտ եւ շուն՝ այլ ինչ ի ձեռն այլոց բնաւորեցաւ գտանել, յորոց գիտէ զոր ինչ գիտէ. այլ զայս ըստ բնութեան առնէ, եւ ոչ ըստ տրամախոհութեան. եւ զի ըստ բնութեան գոյանայ նմա այսպէս՝ յայտ է յայսմանէ, զի ամենայն շուն այսպէս առնէ: Բայց ոչ ամենայն մարդ հաւաքէ, ապա ուրեմն մարդուն միայն գոյ հաւաքելն. զի թէ հաւաքէին եւ անբանք, որ ոչ գիտեն զընդհանուրսն, առանց որոց ոչ լինի հաւաքումն, զինքեանս պատրաստէին: Եւ զի անասունք անգիտանան զընդհանուրսն, յայտ առնեն աքաղաղք. համատեսակաց զենեցելոցն եւ ի զենումն եկելոցն՝ նոքա խայտան, ոչ գիտելով թէ այն ինչ ի նոսա հասանելոց են չարիքն:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

ՊՐԱԿՔ Բ

Յետ դիտաւորութեան <եւ> պիտանացուին, ասացուք եւ զկարգն առաջիկայ շարագրութեան, որ ունի այսպէս եւ ըստ այսմ օրինակում, եթէ Առաջին է առաջին դրութիւն պարզ ձայնիցն: Երկրորդ է՝ դրութիւն նոցին: Երրորդ է՝ դրութիւն առաջին շարադրութեան, այս ինքն նախադասութեան. իսկ նախադասութիւն պարզ հաւաքումն՝ այլոց ըստ մասին հաւաքմանց:

Արդ յաղագս առաջին դրութեան պարզ ձայնիցն ի Ստորագութիւնսն ճառեաց. իսկ յաղագս երկրորդ դրութեանց պարզ ձայնից: այս ինքն յաղագս անուանց եւ բայից ի Յաղագս մեկնութեան, յորում եւ վասն նախադասութեանց ճառեաց. այս ինքն է յաղագս առաջին շարադրութեան պարզ ձայնից՝ յորոց ամենայն հաւաքմունք: Յաղագս ընդհանուր հաւաքման յառաջիկայունս ճառէ իրողութեան. յաղագս ըստ մասին հաւաքմանց՝ յետ այսր իրողութեանս ճառէ. եւ յաղագս ապացուցականին՝ ի յերկրորդումն վերլուծականումն: Իսկ յաղագս տրամաբանականումն՝ ի Տեղիսն. իսկ յաղագս ճարտասանականին՝ ի Յաղագս ճարտասանականութեանց արհեստս: Իսկ յաղագս իմաստականին՝ ի Յաղագս իմաստականութեանց յանդիմանութեանց. իսկ յաղագս քերթողականին՝ ի Յաղագս քերթողականութեանց:

Արդ յառաջագոյն է առաջիկայ իրողութիւնս ամենեցուն ըստ մասին հաւաքականաց իրողութեանց, վասն զի եւ պարզ հաւաքումն ըստ մասին էիցն: Իսկ Ստորագութեանցն իրողութիւն յառաջագոյն է, քան զՅաղագս մեկնութեան. որ է պարզ ձայնիցն երկրորդ շարադրութիւն. իսկ Յաղագս մեկնութեան, քան զվերլուծականսն. վասն զի երկրորդ դրութիւն յառաջագոյն է քան զառաջին շարադրութիւն: Եւ առաջին շարադրութիւն պարզ հաւաքման: Եւ այսոքիկ յաղագս կարգաւորութեան պարզ հաւաքման:

Յետ որոյ ասացուք եւ զպատճառս մակագրութեան: Մակագրեալ է առաջիկայ բոլոր իրողութիւնս՝ վերլուծականք ի միոյ հատածէ յերրորդէն առաջին բանէն. այլ զի ստուգաբար գիտասցուք զասացեալդ, ասացուք զառ ի մասնկունս բաժանումն: Արդ բաժանի առաջիկայ բոլոր իրողութիւնս վերլուծականաց ի չորս ճառս: Եւ առաջինք երկու ճառքն՝ Առաջին վերլուծականք մակագրեալք են. իսկ վերջինքն երկու եւս ճառք՝ կամ վերջինք, եւ կամ երկրորդ վերլուծականք: Եւ արդ յառաջինսն յերկու ճառսն յաղագս պարզ հաւաքման բուռն հարկանէ: Արդ երկաքանչիւրոցն երկակացն՝ յառաջին ճառսն այս ինչ, առաջինն եւ երկրորդն բոլոր իրողութիւնս յաղագս տեսակի գոն ասացեալք իւրեանց հաւաքմանն. իսկ երրորդն ի չորրորդն յաղագս նիւթոյ իւրեանց հաւաքմանն գոն ասացեալք:

Իսկ առաջին ճառն Առաջնոց վերլուծականացն բաժանի յերիս հատածս: Եւ առաջին հատած նորին՝ յաղագս լինելութեան է առաջին, այսինքն յաղագս պարզ հաւաքման. իսկ երկրորդ հատածն յաղագս առատութեան առաջարկութեանց է. իսկ երրորդն յաղագս վերլուծութեան հաւաքմանցն: Բայց յամենայն ուրեք, գրեթէ յամենայնում ճառում յիշէ յաղագս վերլուծութեան հաւաքմանց: Սակայն երրորդ հատածն յաղագս վերլուծութեան հաւաքմանց մակագրեցաւ. վասն զի բազմաց ելոց յեղանակաց վերլուծականաց՝ գրեթէ զբոլորն յարադրէ յերրորդումն հատածին:

Բայց յատուկ լինելութեան եւ հաւաքմանցն է առնուլն առաջարկութիւնս ոմանս, որպիսիք կարօք գոն շարադրել որպէս ազգակիցք, եւ հիւսել զնոսա, եւ գտանել զհետեւօղն նոցա, այս է զհետեւութիւն նոցին բաղեգերումն. որգոն՝

զբանականն, զմահկանացուն, զանմահն, որ հաւաքի ի մարդ, կամ ի հրեշտակ: Իսկ յատուկ լինելութեան առաջարկութեանց է առնուլն զինչ եւ է բաղեզերութիւն, եւ գտանել զառաջարկութիւնս, որք յարդարեն զնա:

Որգոն՝ տուաւ ինձ առաջրկութիւն, եթէ անձն անմահ է. արդ կամ է իմ գտանել զառաջարկութիւնս, որք յարդարեն զնա: Եւ դարձեալ տուաւ ինձ որպէս ոք առ այլ առաջարկութիւնս, եթէ անձն անմարմին է. արդ կամ է ինձ գտանել առաջարկութիւնս այնպիսիս, որպիսիք զնա կարօղք գոն յօրինել: Իսկ յատուկ վերլուծութեան է ի հաւաքմանցն առնուլն հաւաքումն որպիսի ինչ եւ է եւ վերլուծանել զնա յայնս՝ յորոց շարադրեցեալ գոյ. այս ինքն որո՞յ ձեւոյ է, եւ ո՞ր է աւարտումն եւ ոչ աւարտումն. եւ զիա՞րդ մարթ գոյ զերկրորդում ձեւումն հաւաքումն վերլուծանել յառաջին ձեւն: Եւ դարձեալ զիա՞րդ մարթ գոյ՝ զանկատարսն ի հաւաքման ի կատարումն ածել: Եւ այսոքիկ յաղագս ի մասնկունսն բաժանման բոլոր առաջիկայիս իրողութեան հաւաքմանց, որ մակագրեալ գոյ վերլուծականք, յերրորդ հատածէ առաջին ճառին:

Բայց վերլուծականք մակագրեցան եւ ոչ շարադրականք, վասն երկուց պատճառաց. նախ եւ առաջին, վասն զի սակաւագոյն է վերլուծութիւն քան զշարադրութիւն. զի որ վերլուծանելն կարօղ գոյ, նա եւ շարադրել. բայց ոչ որ շարադրելն գիտէ, նա եւ վերլուծանել. որպէս եւ ի տգիտաց իսկ յայտ է, որք երկայն շարադրել բանս գիտեն, բայց վերլուծանել զնոսա յայնս՝ յորոց եւ շարադրեալքն գոն, ոչ գիտեն, այս ինքն ի բառս եւ ի փաղառութիւնս եւ ի տառս: Երկրորդ պատճառ, եթէ երկրաչափականացն տեսութեանց եւ շարադրութիւնս ունելով եւ վերլուծութիւնս, երկրաչափքն զվերլուծութիւնս միայն գրեն, վասն զի աւելորդ խոհամտութեան պէտս ունին: Եւ այսոքիկ այսպէս:

Յետ որոց՝ եթէ հարազատ գոյ, խնդրեսցուք: Արդարեւ հարազատ Արիստոտել գոյ առաջիկայ իրողութիւնս՝ յերկից իրաց յայսցանէ: Նախ եւ առաջին՝ եթէ քառասուն գրոց գտելոց հաւաքմանցն ի հին գրանոցսն, չորք միայն այսոքիկ գիրք ընտրեցան գոյ Արիստոտելի: Երկրորդ՝ եթէ վասն զի յայսցանէ յիշէ իսկ ինքն Արիստոտել յիւր հարազատ բանս. քանզի Յաղագս մեկնութեան ասէ, թէ Այսոքիկ՝ որպէս ի վերլուծականսն գոն ասացեալ, նոյնպէս դասեսցին: Երրորդ պատճառ, եթէ եւ արիստոտելական պահեալ գոյ սովորութիւն. քանզի սովորութիւն է Արիստոտելի զընդհանուրսն նախադասել մասնականացն, որպէս եւ Յաղագս անձին առնէ՝ նախադասելով զընդհանուր անձն մասնականին. նոյնպէս եւ աստ արար՝ նախադասելով զընդհանուր հաւաքումն մասնականի հաւաքման:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ

ՊՐԱԿՔ Գ

Երրորդ եթէ է մասն, եւ եթէ մասնիկ իմաստասիրութեան բանականս, Եւտոկիոս սկիզբն առնելով յիշատակութեանն Պորփիրի Ներածութեանցն խնդրէ. իսկ Աղէքսանդրոս զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն՝ լաւագոյն քան զնա արար. քանզի խնդրէ, եթէ մասն է, եւ եթէ գործի իմաստասիրութեան բանականս, կամ ըստ հաւաքականին միայն է, եւ կամ ըստ բոլորին: Քանզի երեք կարծիք վասն այսորիկ ասեն եղեալք, վասն զի ստոյիկեանքն ասէին մասն գոլ զհաւաքականն

իմաստասիրութեան. իսկ արիստոտէլականքն՝ գործի. իսկ պլատոնականքն՝ եւ՛ գործի եւ՛ մասն:

Բայց այժմ զձեռնարկութիւն ստոյիկեանցն ասասցուք. որոց առաջին ձեռնարկութիւն է այս. Ամենայն իրում պիտոյանայ արուեստ ինչ, եւ կամ մակացութիւն, եթէ ոչ է այլոյ արուեստի մասն, եւ կամ մասնիկ նորին. իսկ պիտացելոցն մասն է, կամ մասնիկ. քանզի տածականումն՝ պիտանանայ բժշկականութիւն., որ ոչ է այլոյ արհեստի մասն կամ մասնիկ, հարկ է նորին բժշկականութեան մասն գոլ եւ կամ մասնիկ: Եւ բարուք առկայացաւ, եթէ ոչ է այլոյ արհեստի մասն եւ կամ մասնիկ՝ վասն քերականութեան եւ աստեղաբաշխութեան. եւ զի ոչ է մասն քերականութեան աստեղաբաշխութիւն. քանզի աստեղաբաշխութիւն ուսումնականին գոյ մասն, իսկ բոլոր իմաստասիրութեան մասնիկ:

Արդ հաւաքականումն միայն պիտանանայ իմաստասիրութիւն, ի տեսականումն՝ առ ի յորոշումն ճշմարտութեան եւ ստութեան, իսկ ի գործականումն՝ առ ի յորոշումն բարւոյ եւ չարի, եւ այլոյ արհեստի, կամ մակացութեան ոչ մասն եւ ոչ մասնիկ գոյ, յայտ է՝ եթէ իմաստասիրութեան է մասն եւ կամ մասնիկ. որ եւ հակաբաժանի ի տեսականումն եւ ի գործականումն. քանզի եթէ ցուցցուք, եթէ ոչ է մասնիկ, հարկ է մասն գոլ. արդ մասնիկ գոլ ոչ կարէ, քանզի մասնիկն զնոյն նիւթ բոլորին եւ զնոյն կատարումն նորին ունի: Արդ տեսականն նիւթ ունի զամենայն գոյսս առ ի գիտել, իսկ կատարումն զճշմարիտն. իսկ գործականն նիւթ ունի զմարդկային հոգիս, իսկ կատարումն զբարին. այս ինքն՝ կամ զչափաւորապէսն գոլ ի կիրս, ըստ Արիստոտէլումն, եւ կամ զանախտն գոլ, ըստ Պլատոնումն: Նոյնպէս եւ հաւաքականն նիւթ ունի զձայնս, իսկ կատարումն զապացույցն: Արդ ոչ կարող գոյ մասնիկ գոլ իմաստասիրութեան, քանզի ոչ ուրեք զմասանց նորա զնոյն կատարումն նորին ունի:

Առ որս ասենք, եթէ զխնդրելին խոստովանելի առնէք, եթէ ոչ է գործի նորին. եւ անկատար է բանդ ձեր. քանզի այսպէս պարտ էր յառաջ բերել, եթէ էր կատարումն ամենայնի՝ որում պիտանանայ արհեստ, եւ կամ մակացութիւն. եթէ ոչ է այլոյ արհեստի մասն եւ կամ մասնիկ եւ կամ գործի նորին. իսկ պիտացելոցն մասն է եւ կամ մասնիկ եւ կամ գործի: Զի որպէս ցուցիք՝ եթէ մասնիկ իմաստասիրութեան, նոյնպէս պարտ էր ցուցանել՝ եթէ եւ ոչ գործի նորին է, եւ ունէիք զխնդրելին. ապա թէ ոչ եւ մէք ասասցուք զերակահատն, որ է ի մարմին, բժշկականութեան մասն գոլ. քանզի այլոյ արհեստի ոչ մասն է, եւ ոչ մասնիկ, այլ բժշկականութեան միայն պիտոյանայ:

Երկրորդ ձեռնարկութիւն ստոյիկեանց, որք ցուցանեն եթէ մասն է բանականն իմաստասիրութեան: Եթէ նոյն ինքն ասէ, իմաստասիրութիւն ծնաւ զհաւաքումն նորին, ապա ուրեմն եւ մասն է: Առ որս ասենք եթէ շատ ինչ ծնանին արհեստք ոմանք՝ որք ոչ են նոցա մասունք. բայց բացակատարեցին զնոսա, որպէս զի եւ ինքեանք առցեն ի պէտս եւ այլք. քանզի քանոնումն եւ կանգնումն պիտանանայ եւ հիւսն եւ շինողն. թէպէտ եւ հիւսն բացակատարեաց զնոսա. եւ զի որպէս գործի բացակատարեաց զնոսա հիւսն առ ի պիտանանալ նոցին. յայտ է յայնմանէ, զի բազում զգուշութեամբ գործեաց վասն ամենայն իրօք պէտս ունելոյ նոցա, ոչ իւր միայնոյ, այլ եւ այլոց:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ

## ՊՐԱԿՔ Դ

Եւ զի մասն իմաստասիրութեան զհաւաքականն յարդարեցին ստոյիկեանքն ի ձեռն երկուց ձեռնարկութեանցս, զորս եւ կործանեցաք: Իսկ եթէ որպէս գործի յարդարեն արիստոտէլականքն, այսպիսուս պիտանացեալք բանում. եթէ մասն է ասեն հաւաքականն իմաստասիրութեան, վասն զի եւ այլ արիեստք պիտանանան բ[ա]նական հնարում, բաժանելով, զինքեանս, եւ սահմանելով եւ ապացուցելով. նաեւ ձեռնայինքն հաւաքաբանեն. որզոն՝ շինողականն հաւաքաբանէ, եթէ յորժամ հանդերձեալ է ուղղորդ յարուցանել զորմն, պարտ է հիմունս արկանել: Արդ՝ եթէ առաջինն ամենայն իրոք, ապա ի հարկէ ուրեմն եւ երկրորդն. եւ աթոռ՝ եթէ հանդերձեալ է զնիստն ճահաւոր ունել՝ պարտ է նմա այսպիսի ինչ ունել զձեռն՝ հաւաքաբանէ հիւսն: Տրպագոյն ապա ուրեմն իմաստասիրութիւն եւ քան զձեռին արիեստք, որ քաւ եւ մի լիցի. որովհետեւ եւ մասնում նորա, այս ինքն կատարման պիտանանան եւ այլ արիեստք, քանզի է ընդհանուր: Եթէ երկու արիեստ գոլով, եւ միւսն պիտանանայ միւսոյն կատարման, որպէս գործոյ, յոռի գոլ ասի այն՝ որում պիտանանայն, քանզի յոռի ասի գոլ սանձարարականն քան զձիականն:

Առ որս ասեն ոմանք ի մերոցն, եթէ ըստ ձեր բանումդ՝ յոռի ուրեմն է եւ երկնային անձն քան զմարդկայինսն, քանզի երկնային անձն բացակատարեաց զմեր մարմինս, որում որպէս գործոյ պիտանանայ մեր հոգիս: Առ որս ասելի է, թէ երկնային անձն ոչ միայն զմեր մարմինս բացակատարեաց, այլ եւ զանբանիցն եւ զտնկոցն: Իսկ սանձարարականն՝ սանձս միայն առնէ, այլ եւ ոչ գոյն, եւ որ պիտանանայն սանձաց զձիականն:

Բայց առնեն եւ այլ ձեռնարկութիւն այսպիսի. եթէ ոչ է մասն իմաստասիրութեան բանականս, որպէս ցուցանեմք: Իսկ եթէ մասն ոչ՝ հարկ է գործի գոլ. արդ մասն ոչ կարէ գոլ. վասն զի մասունք ի բաց բարձեալք՝ եւ զբոլորս ի բաց բառնան. բայց ապացոյց էր եւ յառաջ քան զգրել Վերլուծականացն առ ի յԱրիստոտէլէ, քանզի էր ապացոյց եւ բնութիւն իրողութեան: Եւ զայսոսիկ արիստոտէլականքն:

Իսկ պղատոնականքն յարդարեն, եթէ է մասն, եւ է գործի. եւ զի գործի է՝ բաւականանան արիստոտէլականացն ձեռնարկութիւնք: Բայց եթէ ո՞րպէս մասն, յարդարեն ինքեանք. քանզի ոչ բաւականանան ստոյիկեանցն ձեռնարկութիւնքն. վասն զի այնոքիկ կործանեցան: Բայց ձեռնարկեն այսպէս, եթէ մասն է իմաստասիրութեան հաւաքաբանութիւնս, քանզի հաւաքաբանութիւն գիտութիւն է բոլոր գոյից. զի գիտութիւն ամենայն գոյից մասն իմաստասիրութեան է. քանզի ոչ է բոլոր իմաստասիրութիւն. քանզի բոլոր իմաստասիրութիւն պէտս ունի եւ բարեկենդանութեան: Եւ զի մասն իմաստասիրութեան է հաւաքաբանութիւն, գիտէ եւ Պղատոն յիւրում տրամաբանականին ի պէտս առեալ զհաւաքաբանութիւն, զոր եւ Յանկ ուսմանց անուանեաց ի բազում տեղիս: Իսկ ցանկ մասն է՝ որոյ եւ ցանկն գոյ. եւ զի մասն է, դարձեալ յայտ արար յիւրում շարադրութեանն, յորում ասելով, եթէ Կրթեա զքեզ յինքեան կոչեցելովն առ ի բազմաց թախանձութիւն, մինչ տակաւին եւս նորագոյնդ ես, ապա թէ ոչ՝ փախիցէ ի քէն: Ճշմարիտ թախանձութիւն կոչեցեալ զբացազանչութիւն իրացն, իսկ կրթութիւն զգիտութիւն գոյիցն. քանզի երկակի ասի գոլ ապացուցականն. քանզի մին ի նոյնս իսկ յիրողութեանցն բնութեան ասի գոլ.

որգոն՝ անձն ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ: Իսկ միևսն յորոշմունս, այս ինքն՝ ի նկատմունս միայն եւ ի կիտմունս. որգոն՝ յերկուց ստորասութեանց՝ ստորասական գոյ ժողովեալն. այս ի բանս միայն է, իսկ այն եւ յիրողութիւնս. քանզի միայն Արիստոտէլ ոչ հեղգացաւ բացակայտել զհնարս բանից ի նոցունց իսկ յիրողութեանց, եւ կիտակս, այս ինքն է կանոնս առնել: Առ որս Պղատոն ասաց, եթէ Արիստոտէլ արարեր զիմաստասիրութիւն:

Արդ վասն այնոցիկ, որք յիրողութիւնսն են ապացոյցք, ձայնակիցք գոն Արիստոտէլ եւ Պղատոն. իսկ որք ի կիտակս գոն, վասն այնոցիկ տարածայնք են. քանզի <ոչ> էին կիտակք եւ հնարք հաւաքաբանութեան ի ժամանակս Պղատոնի. եւ թէպէտ ոչ էին հնարք յաւուրս Պղատոնի, սակայն ոչ եթէ զանցանէր ինչ ինքն Պղատոն յիւր յինն տրամաբանութիւնսն: Քանզի առաքինիքն եւ մեծքն բնութեամբ՝ ոչ ունին պէտս կիտաց, այլ գեր ի վերոյ քան զնոսա ներգործեն, եւ ինքեանք լինին կիտակք յետնոցայցն: Քանզի ոչ կալաւ պէտս Պղատոն ապացուցականունն Արիստոտէլի, այլ Արիստոտէլ Պղատոնունն, զի առցէ ի նմանէ սերմանիս. ոչ պիտացաւ եւ Յոմերոս յաղագս քերթողականունն Արիստոտէլի, այլ Արիստոտէլ Յոմերոսունն. ոչ պիտացաւ եւ Դիմոսթենէս վիճաբանութեանց Յերմոդիսի, այլ Յերմոդիսն նմա:

Բայց տարակուսեն՝ եթէ զհա՞րդ պղատոնականքն զբանականս եւ մասն եւ գործի նոյն իրաց ասեն կարող գոլ, զի թէպէտ եւ ձեռն՝ եւ մասն եւ գործի, այլ մասն ամենայն մարմնոյ է, իսկ գործի՝ ներանձնաւորին. քանզի մեռելոյ ձեռն, թէպէտ եւ մասն է բոլոր մարմնոյն, այլ գործի ոչ է. քանզի տալոյ եւ առնելոյ գործի է. եւ կուժն՝ եւ մասն է եւ գործի, այլ ոչ նոյն իրի. այլ ամանն գործի է պարունակեցելոցն, իսկ կժաւոր ջուր՝ մասն է այլոյ ջրոյ: Առ որս եթէ ասիցեն պղատոնականքն, եթէ եւ ոչ մեք ասենք նոյն իրաց գործի եւ մասն զբանականն, այլ կամ նոյնունն այլ եւ այլ, եւ կամ զնոյնն այլունն եւ այլունն մասն եւ գործի, որպէս զձեռն. քանզի շնչաւորին գործի, իսկ մարմնոյն մասն եւ կամ նոյնունն գոլ այլ եւ այլ՝ եւ գործի եւ մասն. քանզի իմաստասիրութեան բանականս եւ գործի եւ մասն. քանզի բնութիւն իրողութեանց գոլ ապացոյց՝ մասն է իմաստասիրութեան, իսկ ի կիտակսն՝ գործի:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ

ՊՐԱԿՔ Ե

«Նախ ասել արժան է յաղագս զի՞նչ, եւ որո՞յ խոհմունս, թէ սակս ապացուցի, եւ մակացութեան ապացուցականի»: Ի նախերգանի իրողութեանս զդիտաւորութիւն նորին քարոզէ, եւ այլ ինչ՝ պիտանացու դիտաւորութեան: Արդ զդիտաւորութիւն, զի յաղագս ապացուցի եւ մակացութեան ապացուցականի: Իսկ պիտանացուք հինգ են, քանզի սահմանէ յառաջ զառաջարկութիւն, զսահման, զհաւաքաբանութիւն, ասէ ո՞ր աւարտուն եւ ո՞ր անաւարտ, զի՞նչ որ ի բոլորուն, եւ զի՞նչ որ ոչ ի բոլորուն, եւ զի՞նչ ի մասնուն, եւ զի՞նչ ըստ ամենայնուն, եւ ոչ ըստ ումեքուն:

Բայց տարակուսին եւ առ առաջինն, եւ առ երկրորդն: Եւ առ առաջինն՝ եթէ ընդէ՞ր յաղագս պարզ հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութիւն յաղագս ապացուցի ճառէ անդուստ ի նախերգանէն: Առ որս ասենք զպատճառսն զայս, եթէ ոչ ինչ անտեղի յաղագս պարզ հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութեան, եւ յաղագս ապացուցի

ճառելն եւ գոլ դիտաւորութիւն: Վասն զի ի ձեռն ապացուցական հաւաքաբանութեան եւ պարզ հաւաքաբանութեան առնէ խնդիր: Արդ այսպէս առ առաջինն:

Իսկ առ երկրորդն տարակուսին, եթէ ընդէ՞ր սահման ի միջի դասեաց առաջարկութեան եւ հաւաքաբանութեան. քանզի արժան էր՝ կամ ըստ մեզ կարգաւորութեան պիտանանալ, եւ զհաւաստեալն նախադասել, իսկ հաւաստի մեզ քան զայլս ամենայն սահման է, կամ ըստ բնութեան, եւ ի վերջոյ դասել զսահման քան զառաջարկութիւն, եւ զհաւաքաբանութիւն:

Առ որս չորս ասենք լուծմունս: Նախ՝ եթէ է իւր Արիստոտէլի անուն սահմանիդ. քանզի ինքն ասէ, եթէ Սահման կոչեն՝ յոր լուծանի առաջարկութիւն. իսկ կոչենն առաջարկութիւն գոլով՝ յայտ առնէ, եթէ Արիստոտէլի է այդպէս սահման անուանել. եւ վասն այնորիկ ոչ է արժան յօտարածայնութենէ սկիզբն առնել բառից, այլ ի ծանօթիցն: Այս առաջին պատճառն:

Երկրորդ պատճառն, եթէ պէտս ունի իւր առաջարկութեան սահմանի սահմանումն, քանզի սահման է յոր առաջարկութիւն վերլուծանի. արդ պարտ էր յետ առաջարկութեան զսահմանն գոլ:

Երրորդ պատճառ, եթէ Յաղագս մեկնութեան վասն առաջարկութեանց ճառեր. արդ որպէս զի զպատճառ յառաջեցելոցն եղիցի, վասն զի նախադասեաց զառաջարկութիւնն քան զերիսն, եւ իսկոյն զսահմանն. քանզի թէպէտ յաղագս պարզ ձայնիցն խօսեցաւ եւ յաղագս մեկնութեան անուան եւ բայի եւ ի Ստորոգութիւնսն, այլ ի Ստորոգութիւնսն որպէս պարզ ձայնս միայն քննէ զնոսա: Իսկ ի Յաղագս մեկնութեան որպէս ասութիւնս խնդրէ զանուն եւ զբայ. որպէս եւ զառաջարկութիւն ուսուցանէ եւ աստ, եւ Յաղագս մեկնութեան. այլ Յաղագս մեկնութեան՝ որպէս երեւմունս ուսուցանէ զնոսա. իսկ աստ որպէս մասունս հաւաքաբանութեանց:

Չորրորդ պատճառ, վայել է սահմանումն ի միջում դասիլ առաջարկութեան եւ հաւաքաբանութեան, զի տեսակարարէ զհաւաքաբանութիւնն միջին սահմանս: Զի այս միջին սահմանս կամ ենթակայ է ունենն, այլ սահմանացն, եւ այլում ստորոգի, եւ առնէ զառաջին ձեւն. եւ երկոցունց ենթակայ է, եւ կամ զերկոցունց ստորոգի եւ առնէ զերկրորդ եւ զերրորդ ձեւն. այլ թէ զերկոցունց ստորոգի, զերկրորդն առնէ ձեւ. իսկ եթէ զերկոցունց ենթակայի, առնէ զերրորդն:

Նախադասիլ ատտիկեան է շարադրութիւն. քանզի առլսի եւ պարտն՝ յաղագս զի՞նչ, եւ որո՞յ խոհմունս: Բարւոք դասեաց յաղագս զի՞նչ առ հայցականն, իսկ յաղագս որո՞յն՝ առ սեռականն: Այլ զի՞նչ եթէ յաղագս զապացոյցն. ահա առ հայցականն դասեաց: Եւ յաղագս որո՞յ խոհմունս, եթէ յաղագս մակացութեան ապացուցականին. ապա առ սեռականն շարադասեաց:

Եւ պարտ է զիտել, եթէ այլ է ապացոյց, եւ այլ է մակացութիւն ապացուցականն. քանզի ապացոյցն ինքն իսկ ներգործութիւն է. իսկ մակացութիւն ապացուցական՝ նոյն ինքն ունակութիւն: Եթէ ի նոյնում գոն ենթակայում, արարողականն է ունակութիւն ներգործութեան. իսկ եթէ յայլում եւ յայլում, արարողական է ներգործութիւն ունակութեան: Քանզի արարողական է ուսուցանողին ներգործութիւն. այս ինքն վարդապետութիւն ունակութեան ունողին:

Եւ զի՞նչ առաջարկութիւն եւ սահման եւ զի՞նչ հաւաքաբանութիւն. ահա ի միջում դասեաց զսահման առաջարկութեան եւ հաւաքաբանութեան: Եւ յետ այսորիկ ո՞ր աւարտումն եւ որ անաւարտն: Եւ պարտ է գիտել՝ եթէ աւարտումն եւ անաւարտն զանազանութիւնք են հաւաքաբանութեանց: Եւ զի՞նչ որ ի բոլորումն եւ ըստ ամենայնում, եւ ոչ ըստ ունեքումն. այսոքիկ զանազանութիւնք են առաջարկութեանց, որ ելումն եւ իջումն քատակեալք: Ձի եթէ ի ներքուստ քո սկիզբն առնէ, որգոն՝ յորժամ ասէ, եթէ մարդ կենդանի, այս ի ներ բոլորումն ասի. քանզի ի բոլորումն կենդանուջն է մարդն, որպէս ի սեռումն: Իսկ եթէ ի վերուստ սկիզբն առնէ եւ ասէ՝ կենդանի ըստ ամենայն մարդումն, այս ըստ ամենայնում ասի: Եւ նոցին հակակայքն՝ ոչ ներ ի բոլորումն եւ ոչ ըստ ունեքումն:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք  
ՊՐԱԿՔ Զ

«Արդ է նախադասութիւն բան յայտնօղ ինչ ըստ ունեքումն»: Ճանապարհակից լինելով Արիստոտէլ իւրոց հիւսմանց, սահմանէ զնախադասութիւն, այս ինքն զառաջարկութիւն, ասելով. Նախադասութիւն է յայտնօղ ինչ ըստ ունեքումն: Երկակի ելոյ առաջարկութեան, կամ ստորոգականի, եւ կամ ստորադրականի, զստորոգականն միայնումն սահմանէ. եւ որպէս ի ձեռին նորա զստորադրականն ունելով: Քանզի ստորադրականն՝ յորժամ յերկբայս լինին, ստորոգականացն պէտս ունին առաջարկութեանց յարդարումն: Ինչ ըստ ունեքումն, ոչ ստորասութիւն յայտ առնելով. զի թերեւս ասպա ի վերայ ածեալ էր, եթէ ինչ բաց ունեքումն. որ է բացասութիւն: Այլ ինչ ըստ ունեքումն այժմ առ որոշումն ասացեալ է ստորադրականացն առաջարկութեանց. քանզի նոքա ոչ յայտնեն ըստ ունեքումն, այլ ունենն գոլոյ զի՞նչ է, եւ ունենն ոչ գոլոյ զինչ ոչ է: Ձի թէպէտ եւ զընդհանուր հաւաքաբանութիւն սահմանեսցէ. իսկ ընդհանուր հաւաքաբանութիւն ի հանուր յառաջարկութենէ գոյ բաղկացեալ, եւ պարտ էր զընդհանուր առաջարկութիւն գոլ սահմանել:

Արդ ի յաղագս մեկնութեան եւ զընդհանուր առաջարկութիւն սահմանեաց՝ ասելով, եթէ Նախադասութիւն է բան՝ ընդունակ ճշմարտութեան եւ ստութեան. քանզի այս սահման եւ զստորադրական առաջարկութիւնն պարունակէ: Բայց սահմանեաց եւ զստորադրականն անդ ասելով այսպէս՝ Բան յայտնօղ ինչ ըստ ունեքումն, եւ ինչ բաց ունեքումն: Իսկ այժմ զստորոգականն դարձեալ սահմանէ. վասն զի եւ սորա միայնոյ սահման ուղղութեան պէտս ունէր. քանզի Յաղագս մեկնութեան ի ձեռն թուելոյ նշանակութեանց լինէր ստորադրութիւն: Քանզի ասելն՝ ինչ ըստ ունեքումն, եւ ինչ բաց ունեքէ, ոչ ինչ այլ, եթէ ոչ ասել, եթէ առաջարկութիւն՝ կամ ստորասական է, եւ կամ բացասական:

Իսկ աստ ասացեալ զառաջարկութիւն բան գոլ յայտնողական ինչ ըստ ունեքումն, սահմանական արար զբացասութիւնն: Բայց թէպէտ զորակն նեղ ասաց, ոչ ասացեալ՝ թէ եւ ինչ բաց ունեքէ, սակայն զքանակն սփռեաց՝ ասելով, եթէ բայց սա՝ կամ ընդհանուր է եւ կամ մասնական եւ կամ առ անսահմանելի: Քանզի զըստ իւրաքանչիւրսն ոչ յիշեաց, որպէս պարունակեցելոցն առ անսահմանելեացն. քանզի ըստ իւրաքանչիւրքն առ անսահմանելիք: Բայց զանազանին յայլոց առ անսահմանելեաց. քանզի բնաւորեալք ունել՝ ոչ ունին. իսկ նոքա ոչ բնաւորեալք են՝ եւ

ոչ ունին. քանզի ոչ որ կարէ ասիլ որ Սոկրատես կամ ամենայն որ Սոկրատես. եւ կամ այլ ազգ, եթէ ըստ իւրաքանչիւրքն ապականելիք, իսկ մասնականքն անապականք. քանզի միշտ է որ մարդ, իսկ Սոկրատես ապականելի է:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

ՊՐԱԿՔ Է

Սահմանեալ զառաջարկութիւնն՝ իջանէ եւ ի տեսակս առաջարկութեան, երկու տարակուսանս առնելով մեզ տարակուսիլ: Առաջին՝ եթէ ընդէ՞ր յաղագս հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութիւն, եւ այսք եւ յաղագս հանուր առաջարկութեան: Երկրորդ՝ թէ ընդէ՞ր ի տեսակս առաջարկութեանցն զանազանութեան զտրամաբանականն միայն ասէ առաջարկութիւն եւ զապացուցականն. իսկ զիմաստականն եւ զքերթողականն ոչ ասէ: Արդ առ առաջինն ասենք, եթէ իջեալ ի տեսակս առաջարկութեանցն՝ ոչ ինչ ընդհատ ի հանրականումն մնաց. քանզի զանազանին առաջարկութիւնք ոչ ընդ հանրականին իրեանց սահմանաւ, քանզի մի սահման է, այլ այլովք ոմամքք: Իսկ առ երկրորդն ասենք, եթէ իջեալ ի տեսակս առաջարկութեանցն՝ զիուսն տարորոշէ, այս ինքն զբացացուցականն եւ զտրամաբանականն: Եւ այսք յաղագս այսորիկ:

Յետ որոց ասէ զզանազանութիւն բացացուցականի առաջարկութեան եւ տրամաբանականի. եւ առ այժմ տարորոշէ զնոսա ի միմեանց եւ պիտոյիւք եւ նիւթով: Եւ պիտոյիւք՝ եթէ տրամաբանականն հակասութիւն հարցանէ եւ առաջարկութիւն առնէ ոչ զբոլորն, այլ զմասն ինչ հակասութեան, եւ այժմ սահմանէ այսպէս, եթէ Տրամաբանական նախադասութիւն է հարցումն հակասութեան. իսկ ի հաւաքաբանողումն տրասատութիւն երեւեցելոց, եւ ներկարծաւորին: Իսկ ի Յաղագս մեկնութեան այսպէս սահմանէ զնա ասելով, Տրամաբանական է՝ հարցումն պատասխանուոյն միոյ նախադասութեան, կամ միոյ մասնական հակասութեան: Վասն որոյ եւ տարակուսեն, եթէ զհա՞րդ զտրամաբանականն հարցումն հարցումն հակասութեան ասէ. իսկ ի Չաղագս մեկնութեան, միոյ պատասխանոյ հարցումն, եւ կամ միոյ մասին նորա: Առ որ Ամոնիոս ասէ լուծումն իմն այսպիսի, եթէ երկրքեան ճշմարիտ գոն. զի եւ որ զբոլոր հակասութիւնս հարցանէ՝ տրամաբանականն յայտ առնեն, ուրացողական պատասխանիքն հաճոյացեալքն լռեցելումն մասնումն. իսկ զմի առաջարկութիւն ներգործութեամբ, զմիւս եւս մասն զօրութեամբ յայտնելով: Եւ այս յաղագս այսորիկ:

Բացացուցականն ոչ հարցանէ, այլ առնու զկարծեցեալսն ճշմարիտ գոյ նմա, թէպէտ եւ ոչ թուի տրամաբանողումն: Արդ այսպէս պիտոյիւք զանազանին, այլ եւ նիւթով, զի բացացուցականումն ենթակայանայ ամենայն որ ինչ ճշմարիտ է, թէ եւ անկարծելի է. որոգն՝ թէ արեգակն կարի յոյժ մեծ է քան զերկիր, եւ երկիր քան զլուսին. թէպէտ եւ ոտնաչափ երեւի արեգակն: Քանզի այս թէպէտ եւ անկարծելի է, այլ սակայն ճշմարիտ գոյ: Իսկ տրամաբանականումն ամենայն որ ինչ կարծելի է՝ ենթակայանայ, թէպէտ եւ սուտ գոյ: Իսկ ներկարծելի է եւ սուտ՝ ասելն, եթէ Աստուած զամենայն ինչ կարէ ներգործել. վասն զի բազմաց ամենեցուն այսպէս թուի: Բայց սուտ է, վասն զի ի չարիս անկարութիւն ունի նոյնպէս եւ Աստուած, սակս անչափ բարւոյն՝ որ բնութեամբ եւ ի վեր քան զբնութիւն գոյ գոյացեալ ի նմա: Եւ դարձեալ ներկարծաւոր է եւ սուտ՝

ասելն, եթէ ամենայն մարմին ի տեղւոջ է. քանզի այս թեպէտ եւ է ներկարծաւոր, բայց սուտ է. քանզի անմոլարն ոչ է ի տեղւոջն. թէ եւ մակերեւոյթ ասիցենք զտեղին, ոչ ինչ արտաքոյ է անմոլարն՝ ոչ մակերեւոյթ եւ ոչ մարմին. թեպէտ եւ մարմին տացի, գտցի նոյն ինքն տեղական մարմին ի տեղւոջ. եւ այս յանհունս: Եւ այսք մինչեւ ցայսչափ:

Նախադասութիւն է բան ուրումն ըստ ունեքում, որպէս զի թէ ասէր, եթէ նախադասութիւն է, ոչ որպէս թէ երբեմն բան ստորասական կամ բացասական. քանզի ենթագրական է այսպիսիս, որպէս ի ծեռն բացասութեան նշանակելեացն, այլ որպէս այժմու բանս ստորասական՝ ունենք ուրումն ըստ ունեքումն: Եւ սա՝ կամ ընդհանուր եւ կամ ներմասնումն, մասնական եւ կամ անորոշելի. ահա նեղեալ զորակն՝ զքանակն տարածեաց բացաթուեալ զտեսակս առաջարկութեանցն. իսկ զըստ իւրաքանչիւրսն եթող. եւ եթէ որոյ պատճառի՝ ասացաք:

Բայց ասեմ ընդհանուր ամենայնում, կամ ոչ ունեքումն՝ ընդհանուր առաջարկութիւնք զերկուս ընդհանուրս առ որոշմունս պարունակեալք ունին. իսկ ներմասնումն ունեքում, կամ ոչ ունեքում, եւ ոչ ամենայնում: Չմասնական բացասութիւն երկակի անուանէ, ոչ ունեքում եւ ոչ ամենայնում, որպէս ունեմն ստորասութիւն հակակայց ոչ ունեքում ոչ է. իսկ որպէս ընդհանրում ամենայնում ստորասութիւն հակակայիցեալ բացասաբար՝ ոչ ամենայնում: Բայց ոչ ինչ տարբերեսցէ առիթ լինել զերկաքանչիւրոցն հաւաքաբանութեան զտարակուսեալն ի տեսութիւն: Ատ, եթէ ընդէ՞ր հանուր հաւաքաբանութեան ելոյ դիտաւորութիւն, եւ այսորիկ եւ ընդհանուր առաջարկութեան, ինքն ի տեսակս առաջարկութեանցն էջ: Եւ ասէ՛ եթէ ոչինչ արգելու զմեզ ի խնդրելոյ զտեսակս առաջարկութեան, առ ի լինելոյ զդիտաւորութիւն, եւ յաղագս ընդհանուր առաջարկութեան՝ եւ ընդհանուր հաւաքաբանութեան: Քանզի հանուրքն բանիւ ոչինչ զանազանին առաջարկութիւնքն. քանզի զամենայն առաջարկութիւն որպէս այսու սահմանէ, բան է ուրումն ըստ ունեքում:

#### Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

##### ՊՐԱԿՔ Ը

«Բայց սահման կոչեն, յոր վերլուծանի նախադասութիւն»: Յետ սահմանի առաջարկութեան՝ սահմանէ եւ զսահման՝ ասելով, եթէ Սահման կոչեն, յոր վերլուծանի նախադասութիւն, ի ստորոգեալն եւ յենթակայն, եթէ ոմն է՝ յաղագս որոյ է բան, իսկ ոմն՝ յաղագս նորա ասացեալ, որք տիրապէս մասունք գոն առաջարկութեան: Իսկ այլքն ամենայն զշաղկապի տեղիսն ունին, որպէս էրն. եւ կամ զքանակն չափեն, որպէս առորոշմունքն. եւ կամ զորակն, որպէս եղանակն. եւ կամ զբացմունսն:

Եւ զի կարելոր մասունք առաջարկութեան այսք են, աստուստ է յայտ. վասն զի ամենայն առաջարկութիւն ի հարկէ ենթակայ ունի եւ ստորոգումն. եւ թարց երկուց այսոցիկ ոչ երբէք լինի առաջարկութիւն. բայց թարց այլոց լինին առաջարկութիւնք. թարց յեղանակի եւ բացման եւ առստորոգման, առորոշման: Քանզի Սոկրատէս ճեմի, ոչ ինչ յայսպիսեաց ունի, իսկ յաւելեալ՝ եթէ առադրեցելոյ ունեք, կամ տրամատեցելոյ՝ զամենայն առաջարկութիւնս պարունակեաց, զոր Յաղագս մեկնութեան բացատրեաց: Քանզի երկուց ելոց հակադրութեանց, առադրութեան եւ բացառութեան,

տրամատուրեան եւ շարադրութեան, զմին յիշելով յերկաքանչիւրոցն հակադրութեանց՝ եւ զայլն ստորակնարկէ. ի ձեռն առադրութեան զբացառութիւնն յայտնելով, իսկ ի ձեռն տրամատուրեան զշարադրութիւնն: Եւ իւրաքանչիւր ումեք ի չորիցս յայսցանէ առադրիցելոց գոլոյ կամ ոչ գոլոյն, ութ լինին ընդ ամենայն. որոգն՝ առադրութեան գոլոյ՝ առադրութեան ոչ գոլոյ. բացառութեան գոլոյ՝ բացառութեան ոչ գոլոյ. տրամատուրեան գոլոյ՝ տրամատուրեան ոչ գոլոյ. շարադրութեան գոլոյ՝ շարադրութեան ոչ գոլոյ: Արդ զամենայն առաջարկութիւն պարունակեաց:

Որպէս ասացաք եւ ցուցաք, այս բայ է. քանզի ընդհանուր առաջարկութիւնք, որպիսի ինչ եւ է, կամ զօրութեամբ ունի զէն առ ստորոգելով, կամ ներգործութեամբ: Զօրութեամբ, որպէս ամենայն մարդ ենթակայցէ, եւ աստի ստորոգելոյ: Քանզի թէպէտ եւ ոմանք ի դոցանէ ներգործութեամբ ունին զէն, որպէս Աստուած է, Սոկրատէս է, այլ գոյն առ ստորոգելով զօրութեամբ ունին, վասն զի ամենայն բայ յիւր ընդունելութիւն վերլուծանելով. որոգն՝ Սոկրատէս է, Սոկրատէս գոլով է. Աստուած է, Աստուած գոլով է:

Արդ այսք՝ որք զօրութեամբ ունին զէն առկայացեալ, կամ ստորասականք են, կամ բացասականք: Եւ ստորասականք գոլով՝ ստորասութիւն ունին գոլոյն. իսկ գոլոյ է՝ պարտ է իմանալ որ ի բաց բառնայ ի նոցանէ. իսկ բացասականք գոլով՝ բացասութիւն ոչ գոլոյն ունին. քանզի ի բաց բառնայ ի նոցանէ ոչ գոլոյն: Իսկ որք ներգործութեամբ ունին զէն, կամ յեղանակաւ են, կամ առանց յեղանակի. առանց յեղանակի՝ որպէս Սոկրատէս արդար է, Սոկրատէս արդար ոչ է: Արդ ստորասականք գոլով՝ առադրութիւն ունին գոլոյն, իսկ բացասականք գոլով՝ առադրութիւն ունին ոչ գոլոյն. իսկ թէ յեղանակաւ են, կամ ստորասականք են, կամ բացասականք. եւ ըստ իւրաքանչիւրոց, կամ պարզ գոն եւ կամ ի գերադրութենէ: Արդ պարզ գոլով ստորասութեան, եւ յեղանակ շարադրութեան ունի Սոկրատէս մարթաբար:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

ՊՐԱԿՔ Թ

«**Հաւաքաբանութիւն** է բան, յորում դրիցելոց ոմանց՝ նմա նովին այլ ինչ առկացելեօքն՝ ի հարկէ հանդիպի զնոյնս այսպէս ունելով»: Յետ մասանցն հաւաքաբանութեան, զհուպսն ասեմ՝ այս ինքն զառաջարկութիւնս, եւ զհեռիսն՝ այս ինքն զսահմանսն, զայ Արիստոտէլ եւ զառ ի նոցանէ բաղկացեալ հաւաքաբանութիւնս՝ յերից իրողութեանց արտաքս առկացուցանելով զնախերգան առաջիկայիս իրողութեան, Ստորոգութեան, Յաղագս մեկնութեան եւ Վերլուծականացն: Քանզի որպէս ի Ստորոգութեանց յաղագս պարզ ձայնիցն խօսեցաւ, որք են սահմանք. իսկ ի Յաղագս մեկնութեան՝ յաղագս նախադասութեանց. իսկ ի Վերլուծականսն՝ յաղագս պարզ հաւաքաբանութեան. նոյնպէս եւ յարակայում նախերգանունս սահմանեալ զառաջարկութիւն եւ զսահմանս, այսպէս զայ ի հաւաքաբանութիւն:

Բայց սահմանէ զամենայն հաւաքաբանութիւն, զստորոգականն եւ կամ զստորադրականն՝ ոչ զայս եւ ոչ զայն: Քանզի բացատրեցեալ սահման ամենայնում հաւաքաբանութեան պատշաճի: Իսկ Աղէքսանդրոս առյարակայիցս պատմիչ բանից, ասէ՝ թէ Զստորոգականն միայն սահմանէ հաւաքաբանութիւն, երկոքումք այսոքիւք հաւատարմացուցանելով զբանդ: Միով եւ առաջնով, եթէ զստորոգական

առաջարկություն սահմանեաց միայն. իսկ ստորոգականք հաւաքաբանութիւնք ի ստորոգականացն զան յառաջարկութեանց: Ասէ եւ երկրորդ պատճառ, եթէ զանազանութիւնս յարադրէ աւարտնոց եւ անաւարտից հաւաքաբանութեանց. իսկ աւարտեալն եւ անաւարտն ստորոգականացն միայն գոյ հաւաքաբանութեանց:

Առ որս ասենք մեր նախ եւ առաջին, եթէ ստորոգականն միայն սահմանէ առաջարկութիւն, որպէս այն ինչ Յաղագս մեկնութեան զամենայն առաջարկութիւն սահմանեալ: Բայց թէ ընդէ՞ր զստորոգականն միայն սահմանէ զառաջարկութիւն, զպատճառն ասացաք: Բայց լուծանենք եւ զերկրորդն այսպէս, եթէ ստորադրականացն զանազանութիւն յարադրէ հուպ ի կատարումն առաջնոյ հատածի առաջնոյ ճառիս, որ առձեռն է: Եւ արդ այսոքիկ առ Աղէքսանդրոս ասացին: Այլ վասն զի Արիստոտէլ՝ եթէ զի՞նչ է հաւաքաբանութիւն, յարադրէ միայն, թողեալ զեթէն: Իսկ եթէն յառաջագոյն է քան զզինչէն, բեր ցուցուք, եթէ է հաւաքաբանութիւն: Բայց զայս առնենք վասն եփիկտիոսացն փիլիսոփայից, որք անհասութիւն ախտանան, եւ այսուիկ ի բաց բառնան զհաւաքաբանութիւն, որպէս զգործին մտահասութեան:

Բայց բառնան զհաւաքաբանութիւն այսպէս ձեռնարկելով. Ի ձեռն հաւաքաբանութեա՞ն ցուցանէք, ով ճերմականք, եթէ է հաւաքաբանութիւն, եթէ առանց հաւաքաբանութեան: Եթէ առանց հաւաքաբանութեան, ոչ հաւանիմք ձեզ որպէս ոչ ցուցելոց. իսկ եթէ ի ձեռն հաւաքաբանութեան, զսկզբանումն հայցելի է զերկբայացեալն խոստովանեալ առնելով: Այլ եւ յաղագս հաւաքաբանութեան, որ եցոյցն՝ եթէ է հաւաքաբանութիւն, զնոյնս ցուցէք. եւ այս յանհունս:

Առ որս ասենք զայսոսիկ, եթէ ձերովք իսկ ըմբռնեցայք թելօք ըստ առասպելումն որպէս մանկունականք: Քանզի զնոյն եւ մեր ասենք առ ձեզ, եթէ ուստի՞ ասէք՝ եթէ ոչ է հաւաքաբանութիւն. բացացուցանելո՞վ, եթէ ոչ բացացուցանելով: Եւ զիա՞րդ կարողութիւն է՝ ոչ ելոյ հաւաքաբանութեան ըստ ձեզ՝ հաւաքաբանութեամբ պիտալ. զոր ի բաց բառնալ ձեռնարկէք. այլ եւ ոչ յանհունս ելանենք: Քանզի հաւաքաբանութիւնն՝ որ եցոյց, եթէ է հաւաքաբանութիւն, եւ զինքն եցոյց, թէպէտ եւ ոչ որպէս հաւաքաբանութիւն, այլ որպէս հաւաքաբանելի. որպէս եւ սահման եւ զինքն սահմանէ, թէպէտ եւ ոչ որպէս սահման, այլ որպէս սահմանելի: Բայց արդ այսպիսի բան՝ որ ցուցանէ, եթէ է հաւաքաբանումն, այլ այլովն ցուցանելի է՝ եթէ է հաւաքաբանումն: Քանզի բնութիւն ոչ զամենայն ինչ թաքոյց. զի ոչ էր ապա գտանելն, եւ ոչ զամենայն ինչ յայտնեաց, զի ոչ էր ապա խնդրել, այլ խնդրելն եւ գտանելն: Բայց եկն մարդկային տրամախոհութիւնն հաւաքաբանել յայսպիսւոյ պատճառէ. քանզի տեսանեն զամենայն իրս ոչ ամենեւիմք հաղորդեալս ընդ միմեանս. քանզի ոչ էր ապա այլ այլով գտանել. վասն զի ամենայն ինչ յինքեանս ցուցանիր, որ զգայութեանց է յատուկ, եւ ոչ հաւաքաբանութեան. եւ ոչ դարձեալ ամենեւիմք զանազանեալս ի միմեանց, քանզի ոչ երբէք յերկուց բացասութեանց եզրակացութիւն լինի: Եւ այսոքիկ յաղագս այսորիկ:

Յետ որոց եկեսցուք ի նոյն ինքն ի հաւաքաբանութիւն, զոր սահմանէ այսպէս. «Հաւաքաբանումն է բան, յորում դրիցելոց ոմանց, այլ ինչ առկացելովք ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ»: Այս սահման եւ սեռ ունի. քանզի **բան**՝ սեռ է բացացուցականին, տրամաբանականին, ճարտասանականին, իմաստականին, քերթողականին. եւ բաղկացուցիչ զանազանութիւնս: Իսկ զանազանութեանց ոմանք ի նիւթոյ են, որպէս

**ոմանց եւ դրիցելոցն.** Իսկ ոմանք ի տեսակէ, որպէս այլ ինչ առկացելեօքն ի հարկէ. եւ այլքն ամենայն ի կարգումն: Իսկ տեսակ հաւաքաբանութեան եզրակացութիւնք: Բայց հաւատեսցուք զիւրաքանչիւր ոք ի բառիցդ առանձին:

«Բան՝ յորում դրիցելոց ոմանց»: **Դրիցելոց** ասաց, եւ ոչ ստորադրիցելոց, ապա թէ ոչ՝ զստորադրականն միայն սահմանէր. եւ ոչ ստորոգիցելոց ասաց, ապա թէ ոչ զստորոգրականն միայն սահմանէր. այլ՝ դրիցելոց ասաց. այսինքն՝ խոստովանիցելոց: Եւ պարառոցեաց զստորոգականն եւ զստորադրականն. քանզի առաջարկութիւնքն խոստովանեցեալք ոմանք գոն: Եւ ի ստորոգականն, վասն զի առաջարկութիւն. իսկ ստորադրականին, որպէս շարամերձական եւ առասութիւն: Եւ զի դրիցելոցն խոստովանեցելոց է, յայտ է. վասն զի նշանակութեանց դրութիւն է խոստովանութիւն: Իսկ դրիցելոց ասաց առ հակորոշումն այլոց բանից, որպէս ըղձականին, հրամանականին եւ հակորոշեցելոցն բացերեւականումն. քանզի յոչ ուրուք վերայ նոցա նախենթակայէ ինչ երբէք խոստովանեցեալ: Բայց յոգնակի ասաց՝ դրիցելոց, ի ոչ եզակի՝ դրիցելոյ. վասն շարամերձականաց, եւ տարալժականաց, եւ վասն հակադարձմանց՝ եւ վասն եզառածիցն. քանզի ի նոսա մի զմիոյ զկնի երթայ:

Որգոն, որպէս շարամերձականն եթէ է արեգակն ի վերայ երկրի՝ տիւ է. այլ արդ ի վերայ երկրի, ապա ուրեմն տիւ է. եւ ի տարալժականն նմանապէս, կամ տիւ է եւ կամ գիշեր, այլ ահա տիւ է, գիշեր ապա ուրեմն ոչ է: Նմանապէս եւ ի հակադարձումն մի զմիոյ զկնի երթայ. որգոն, եթէ ոչ ոք քար՝ մարդ է, եւ ոչ ոք մարդ՝ քար է. եւ զի յեզառածն մի միում հետեւի. բայց պիտոյ են եզառածիցն ճարտասանքն. որգոն՝ այս անուն պճնօղ, ապա ուրեմն եւ շուն. այս անուն մեռաւ առընթեր կալով նորա որ եսպան, մեռելումն ապա ուրեմն սպանօղ: Արդ այսպիսեացս պիտային հաւաքաբանութեանց եւ եսքինես ընդդէմ Դեմոսթենայ ասելով. քանզի որդիատեացն եւ հայր չար, յաւել, թերես ոչ երբէք հրապարակութեամբ երեւեսցի քաղցրապիտակ: Այսոքիկ ամենեքեան անաւարտք են հաւաքաբանութիւնք:

Բայց զի կոչեցին անաւարտունք. այսպէս պարտ է ասել. այս անուն պճնօղ. ամենայն պճնօղ շուն, ապա ուրեմն այս անուն շուն է: Այս անուն առաւ ի գիշերումն առընթեր նորա կալով սպանումն, առելումն ամենայնի սպանող է այս անուն, ապա ուրեմն այս անուն սպանող է. նմանապէս եւ զԵսքինեայ հաւաքաբանութիւն այսպէս պարտ է ասել. Դեմոսթենէս որդիատեաց եւ հայր չար. ամենայն այսպիսի թերես ոչ երբէք երեւեսցի հրապարակութեամբ քաղցրապիտակ: Բայց պիտային եզառածիցն ճարտասանք՝ վասն չորից պատճառաց. կամ խնայելով ի ժամանակն. քանզի առ հոսանուտն ընտրելով առնէին, կամ շողոքորթելով զդատաւորսն, որպէս զգիտունսն հաւաքաբանից հնարից, եւ կամ այլազգաբար, որպէս զի ձայնակիցս կալցին զդատաւորսն, որպէս վերալցօղս զպակասումն. քանզի ամենայն ոք ընդ ինքեան առաւել հաւատայ ասողում, քան թէ այլում: Եւ այլազգաբար, եթէ կամաւորութեամբ՝ թողուին զմեծ առաջարկութիւնն. վասն զի բազում անգամ սուտ գտանէին, եւ վասն թաքուցանելոյ զուտն այնպէս առնէին:

Արդ, բարուք ասաց **դրիցելոց ոմանց.** եւ ոչ դրիցելոյ ունեք, քանզի ի հաւաքաբանութիւնսն յոլովք դնին, եւ ասելով դրիցելոց, առակեաց, եթէ է կարի նուազ երկուքն ամենայն իրօք: Վասն զի եւ բազում առաջարկութիւնս կարողութիւն է դնել ի հաւաքաբանութեան. եւ աստուտ եւ անուն հաւաքաբանութեան գտաւ, որ նշանակէ

բաղիալաբունմն. քանզի բաղ՝ յորոց վերայ առադրի, բազմութիւն նշանակէ. որպէս մարտակից, որպէս որդեկից, նոյնպէս հաւաքակցութիւնք, այս ինքն բաղիալաբունմն, սակս բազում ինչ միանգամայն հաւաքաբանելոյ: Քանզի ի սմա ոչ եթէ մի միումն հետեւի, այլ բազմաց մին. որզոն՝ մարդ, կենդանի, շնչաւոր. ապա ուրեմն եւ մարդն շնչաւոր: Ապա բազմաց՝ այս ինքն կենդանումն եւ ներանձնաւորումն՝ մինն հետեւի, այս ինքն մարդ ներանձնաւոր:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք  
**ՊՐԱԿՔ Ժ**

«Այլ ինչ առկացելեօքն ի հարկէ հանդիպի զնոյնս գոլ»: Յետ առ ի նիւթոյն զանազանութեանց՝ զայ եւ առ ի տեսակէն: Այլն առկայանայ, որպէս զի այլ եղիցի եզրակացութիւն առաջարկութեանց, եւ ոչ մի ինչ ի նոցանէ իցէ նոյն. որզոն՝ մարդ կենդանի, կենդանին՝ գոյացութիւն, ապա ուրեմն մարդ գոյացութիւն: Արդ մարդ գոյացութիւն, եւ ոչ մի ինչ ոք է յառաջարկութեանցն նոյն գոլ. իսկ ոչ մի ինչ յառաջարկութիւնս նոյն գոլ՝ է եզրակացութիւն, այս ինքն բաղեզերումն: Ասացաւ եւ վասն տարբերեցելոցն առ ի ստոյիկեանցն բաղիալաբմանցն, որք զբաղեզերումն զնոյն առնէին միում յառաջարկութեանց: Որզոն՝ եթէ տիւ է, տիւ է. այլ արդ տիւ է, ապա ուրեմն տիւ է. քանզի սոքա սակս թախանձանս ի ներքս ածելոյ եւ ոչ զգործոյն առնեն, քանզի ոչ եթէ այլ այլով ցուցանեն, այլ զինքն ինքեամբ. այսինքն զնոյն նոյնիւ:

**Ինչ.** ոչ է արհամարհել զինչդ, որպէս զմի փաղառութիւն. քանզի անչափ ունի զօրութիւն, որպէս եւ որ ոչ ինչ գոլ բաղիալաբականացն, եւ անբաղիալաբմանց լծակութեանց: Վասն զի պարտ է գիտել, եթէ որքանիք լծակցութիւնք նոյն հիւսմանց պատահեցելոց. իսկ նիւթոյն փոխեցելոյ ինչ ժողովեն՝ եւ մի, եւ ոչ բազում, այնոքիկ բաղիալաբականք ասին. իսկ որքանիք լծակցութիւնք նոյն հիւսմանց պատահեցելոց, եւ միոյ սահմանի փոխեցելոյ, այլ ինչ եւ այլ ժողովեն, երբեմն ումեքումն, եւ երբեմն ոչ ամենայնի. այնոքիկ անբաղիալաբականք ասին:

**Ի հարկէ.** ի հարկէ ասացաւ, որպէս զի հարկաւոր եւ կարելոր եղիցի ժողովելն մակածականացն եւ յարացուցից, որք ոչ հարկաւոր ինչ ժողովեն. քանզի ամենայն հաւաստ կամ ի հանգիտէն զհանգէտն յարդարէ, կամ ի նուազէն զմեծն, եւ կամ ի մեծէն զնուազն: Արդ որ ի հանգիտէն զհանգէտն յարդարէ, ասի յարացոյց. որզոն՝ ոչ տացուք Դիոնէսիոսումն թիկնապահ մարմնոյ. վասն զի եւ Պիսիստրատոս առեալ բռնացաւ: Քանզի ոչ հարկաւոր է՝ թէ Պիսիստրատոս բռնացաւ, եւ Դիոնէսիոս բռնանայ: Իսկ որ ի նուազէն ըզմեծն յարդարէ, մակածութիւն ասի. որզոն՝ վասն զի մարդ եւ ձի զներքին կլափն շարժեն, ոչ է հարկաւոր՝ թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի զներքին կլափն շարժէ, որ ոչ է հարկաւոր փիւնիկաթելի եւ կոկորդիլոսի եւ գոճամի, որք զվերին կլափն շարժեն: Իսկ որք ի մեծէն զնուազն հաւաստեցուցանեն, այնոքիկ բաղիալաբումն ասին, որք հարկաւոր հաւաքեն. որզոն, եթէ ամենայն մարդ երկոտանի գոյ, ապա եւ Սոկրատես երկոտանի գոյ, որ է կարելոր:

Իսկ հանդիպի ասացաւ, վասն տրամաբանականացն եւ իմաստականաց բաղիալաբմանց, որք զմարթելին եւ զանկարելին ժողովեն, քանզի տրամաբանականքն զմարթելին ժողովեն. իսկ իմաստականքն զանկարելին: Բայց

ուրեք ուրեք գհարկաւորն ժողովեն. սակայն ոչ ըստ ինքեան, այլ ըստ պատահման, եւ զայն հետեւման բաղիաւաքման. քանզի Սոկրատես ճեմի, իսկ որ ճեմի, շարժի՝ մարթելի է: Իսկ հետեւման բաղիաւաքման, հարկաւոր լինի. եւ թեւս ունել Սոկրատուն անկարելի է. եւ մարթելին է բռնութիւն բաղիաւաքման. որգոն՝ Սոկրատես թռչի. եւ որ թռչի, թեւս ունի. ապա ուրեմն եւ Սոկրատես թեւս ունի: Բայց բացացուցականն միայն եւ ըստ ինքեան հետեւման գհարկաւորն ունի. որգոն՝ մարդ կենդանի, որ է հարկաւոր եւ թարց հիւսմանց: Իսկ կենդանին՝ ներանձնաւոր, հարկաւոր այսոքիկ եւ ըստ ինքեան, հարկաւոր եւ ըստ հիւսման լինին:

**Ջնոյնն գոլ.** զայս ասաց, այս ինքն՝ եթէ պարտ է զբաղեզերումն վասն կացելոց առաջարկութեանց, եւ ոչ սահման ի սմանէ արտաքուստ մակիմացելոյ, եւ կամ պակասեցելոյ. որգոն՝ անձն ինքնաշարժ, ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ. ապա ուրեմն անձն անմահ. քանզի ոչ եթէ ի կացելոց առաջարկութեանց ժողովեցաւ, այլ զսահմանի ոմանց արտաքուստ մակիմացելոց, որ ասէ՝ եթէ մշտաշարժն անմահ: Եւ դարձեալ անձն ինքնաշարժ ինքնաշարժն մշտաշարժ, մշտաշարժն անմահ. ապա ուրեմն անձն ինքնաշարժ. քանզի աստ աւելորդ է մի առաջարկութիւն, որպէս մշտաշարժն. քանզի ոչ ինչ պիտարկի ի բաղեզերումն:

Այսպիսիք են եւ առ ի ստոյիկեանցն անճարաբար եզերեալք բաղիաւաքմունքն. որգոն՝ մին հանգէտ գոյ երկուն, եւ երկու հանգէտ գոյ երեքուն. ուրեմն մին երկուն՝ հանգէտ է երեքուն: Եւ դարձեալ մին երկուն՝ մեծ է քան զերկուն, իսկ երկու մեծ է քան զերեքուն. ապա մինն երկուն՝ մեծ է քան զերեքուն. քանզի այսոքիկ անճարաբար ասին եզերեալ: Քանզի զնուազ առաջարկութիւնն երկիցս առնուն, իսկ զմեծն թողուն. քանզի ասելով՝ մին հանգէտ երկուն, իսկ երկու երեքուն հանգէտ, զնուազն երկիցս էառ, իսկ զմեծն եթող. քանզի ոչ մի քան զմի առաւել է. եւ ի վերայ միւս եւ այլոյ յարացուցին նոյն բան պատշաճի: Քանզի պարտ էր ներճարապէս այսպէս հիւսել. մինն երկուն, եւ երկուն երեքուն հանգէտ, իսկ որք նոյնուն գոն հանգէտ, եւ միմեանց գոն հանգէտ, ապա եւ մին երկուն հանգէտ: Եւ դարձեալ մինն քան զերկունսն մեծ մեծի ելոյ քան զերեքունն. իսկ որ քան զմեծն մեծ է, կարի յոյժ ապա եւ քան զնուազն մեծ. ապա եւ մին երկուն քան զերեքուն մեծ: Այս է եւ ճարաբար եզերիլն: Քանզի թէպէտ եւ ի վերայ այնոցիկ յարացուցից ճշմարիտ գոլ ժողովեալն զբռնութիւն ենթակայացելոցն իրողութեանց, այլ ի վերայ այլոց յարացուցիցն ոչ պատկանի բանն. որգոն՝ այս անուն նորա եղբայր, եւ այս անուն նորա եղբայր, ապա այս անուն եւ այս անուն եղբարք գոն միմեանց, որ է սուտ բաղեզերումն. քանզի մարթ գոյ երկուց ոմանց եւ այլունն եղբայր գոլ. բայց միմեանց ոչ գոլ եղբարք: Որգոն՝ ոմն ունելով զորդի յայլմէ կնոջէ, կին էառ զոմն՝ որ ունէր զորդի յայլմէ յառնէ. արդ որ ի նոցանէ յերկուցն ծնանի՝ եղբայր գոյ միունն ի հօրէ, իսկ միւսունն ի մօրէ: Երկուքն միուն գոլով եղբարք, միմեանց ամենեւիմբ ոչ գոն եղբարք:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

ՊՐԱԿՔ ԺԱ

«Բայց աւարտուն կոչեն բաղիաւաքումն զոչինչ արտաքուստ սահմանունն առ կարօտացեալն առ ի լինել բաղեզերումն»: Յետ սահմանին բաղիաւաքման՝ գայ ի զանազանութիւն բաղիաւաքմանցն, զաւարտուն ասեմ, եւ զանաւարտն, ասելով թէ

բաղիալաբանացն ոմանք աւարտունք են, որք յառաջնունն գոն ձեւում. իսկ ոմանք անաւարտք՝ որք յերկրորդունն եւ յերրորդունն ձեւում: Այլ զիա՞րդ ասենք անաւարտ բաղիալաբունն. որովհետեւ անկարօտն կայ ի սահմանունն: Քանզի անկարօտն կարօտեցելոյն կատարելագոյն, իսկ անաւարտ է՝ որ կարօտանայ սահմանում ունեք արտաքուստ. իսկ աւարտուն՝ անկարօտն արտաքուստ սահմանունն: Սակս սորին այսորիկ տարածայնեցան առ միմեանս Մաքսիմոս Ուռհայեցի աշակերտ Իամբլիքոսի, եւ Թեմիստոս. քանզի եւ Թեմիստոս ուշ ունելով բաժանման հաւաքմանցն՝ զոմանս աւարտունս կոչէր, որք յառաջնունն ձեւում, իսկ զոմանս անաւարտ՝ որք յերկրորդունն եւ յերրորդունն: Իսկ Մաքսիմոս ուշ ունելով սահմանունն ունողունն զանկարօտն զամենայն բաղիալաբունն աւարտուն կոչէր: Եւ յաղագս այսորիկ առին դատաւոր զՅուլիանոս թագաւոր՝ որ գյաղթութիւնն ետ Մաքսիմոսունն:

Բայց ասասցուք սակս Թեմիստոսի, զոր եւ ինքն միայնագրում ունեմն ասաց այսպէս, թէ եւ ոչ ես կոչեմ անաւարտ բաղիալաբունն, որ բնաւ կարօտանայ արտաքուստ իմիք սահմանունն: Ջի որ սահմանունն կարօտանայ բնաւ եւ ոչ բաղիալաբունն ունեք, եւ ոչ այլում ունեք արտաքուստ, ոչ հակադարձութեամբ միումն եւ երկուց, եւ ոչ անկարելի մակածութեամբ: Իսկ անաւարտ կոչեմ բաղիալաբունն ոչ զայն՝ որ կարօտանայ արտաքուստն ունեք սահմանունն. քանզի սահմանունն կարօտացեալն՝ եւ բաղիալաբունն իսկ ոչ է: Այլ զայն որ այլումն է՝ անուանէ, ի պէտս արտաքուստ սահմանունն, առ ի արժարժունն հարկաւորին, եւ ոչ եթէ առ ի լրումն, եւ կամ հակադարձունն միում, կամ երկուց, եւ կամ յանկարելին մակածութեամբ: Եւ արդ այսոքիկ յաղագս տարբերութեանց բաղիալաբանացն:

Յետ որոյ յարադրէ մեզ եւ զգանազանութիւնս առաջարկութեանցն՝ զներ բոլորունն եւ զոչ ներ բոլորունն, զըստ ամենայնումն եւ զըստ ոչ ունեքունն. եւ այսոքիկ կամ ստորասականք են, կամ բացասականք: Արդ ստորասականք գոլով ի ներ բոլորունն ասին, եւ կամ ըստ ամենայնում. իսկ բացասականք գոլով՝ ոչ ի ներ բոլորունն, եւ ոչ ըստ ունեքունն: Բայց եթէ զիա՞րդ այսոքիկ զանազանին ի միմեանց, այն ինչ ուսաք, եթէ յորժամ ասենք՝ մարդ կենդանի ի ներ բոլորունն, զմարդն ասենք գոլ ի կենդանունն. իսկ եթէ ասենք կենդանի ամենայնումն մարդունն, ըստ ամենայնումն ասենք զայսպիսի առաջարկութիւնս: Իսկ եթէ ասենք մարդ ոչ ունեք կենդանունն, ասի ոչ ի ներ բոլորունն. իսկ եթէ ասենք կենդանի ոչ ունեք մարդուն, ոչ ըստ ունեքունն ասի:

Բայց տարակուսեն երիս տարակուսանս: Նախ՝ եթէ զիա՞րդ ասենք ներ ի բոլորունն կենդանունն կենդանւոյն մարդուն եւ ձիուն եւ եզուն յարադրելով զինքն: Լուծունն. եթէ վասն զի զբոլոր սահման կենդանւոյն ունի յինքեան մարդն: Երկրորդ տարակուսանք, եթէ ընդէ՞ր յորժամ ասենք մարդ կենդանի, ասի ներ բոլորունն. իսկ յորժամ ասենք կենդանի ամենայնումն մարդունն, ասի ըստ ամենայնումն: Լուծունն այսորիկ. եթէ վայելուչ է ստորոգիցելունն առ անորոշելին. քանզի ի բոլորումն ստորոգիցելունդ գոյ շարամերձեալ, եւ ոչ առորոշունն, որգոն՝ ներ ի բոլորունն կենդանունն. իսկ ենթակայունն վայել է առորոշունն, որգոն՝ որպէս յորժամ ասենք, կենդանի ըստ ամենայնումն մարդունն: Քանզի ամենայնդ այդ առորոշունն շարամերձեալ է մարդունն, ենթակայունն յաւելունն: Երրորդ տարակուսանք, եթէ վասն է՞ր նախակարգեաց զներ ի բոլորունն ըստ ամենայնումն: Լուծունն. եթէ վասն զի

վերլուծական է իրողութիւնս, եւ վայել է վերլուծութեան մանաւանդ վերլուծութիւն, քան զվայրիջութիւն:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք

ՊՐԱԿՔ ԺԲ

«Եւ վասն զի ի նախադասութեանց ոմանք ստորասականք են, եւ ոմանք բացասականք»: Ուսուցեալ զմեզ Արիստոտէլի զամենայն զոր ինչ միանգամ խոստացաւ, եւ սահմանեալ զսահմանս, զառաջարկութիւնս. եւ եթէ զի՞նչ է բաղիաւաքումն, ասացեալ է եւ զգանազանութիւնս նորա զաւարտումն եւ զանաւարտումն, եւ զգանազանութիւնսն առաջարկութեանցն, զոչ ներ բոլորումն եւ ներ բոլորումն, եւ ըստ ամենայնում եւ ոչ ըստ ունեքումն: Այժմ այլ տեղի քննութեանց առնու վարդապետութեան բաղիաւաքմանցն, եւ հակադարձութեան նոցա, որպէս զի մի յերկրորդումն եւ յերրորդումն ձեւումն պէտս ունելով հակադարձութեանց, եւ ոչ ուսուցեալ յառաջագոյն՝ ի վերայ անհաւաստեաց յառաջածեսցէ զբանն, եւ կամ ուսուցէ ի միջումն, կտրեսցէ զշարունակութիւնն: Եւ տարակուսեն, եթէ վասն է՞ր ոչ ուսուցանէ մեզ յառաջագոյն եւ զանկարելին բացածութիւն, եւ թէ զիա՞րդ լինի, վասն զի եւ նմա պէտս ունի եւ յերկրորդումն եւ յերրորդումն ձեւումն:

Առ որս ասեմք, եթէ բաւական համարեցաւ, զոր նորա մտածութիւն ունիմք: Բայց այժմ զայսոսիկ ուսուցանէ եւ յարդարե՛, որպէս ստիպեցուցանօղս: Իսկ յառաջելով եւ զառ ի յանկարելի բացածութիւն ուսուցանէ. քանզի նոյնպէս եւ պիտանացուացս առ ստորագութիւնսն՝ զոմանս նախակարգեաց զանհաւաստիսն, իսկ զոմանս ի վերջոյ ուսոյց:

Բայց լինի սա ի բառնալոյ բաղեզերմանն. ի ձեռն հակակայի առաջարկութեանցն բաղեզերմանն, եւ միոյ առաջարկութեան, որ յառաջէր մնալով եւ զայն ի բաց բառնալով: Որզոն ասեմ մարդ՝ կենդանի, կենդանին՝ ներանձնաւոր, ապա եւ մարդ՝ ներանձնաւոր: Արդ եթէ ոք ասէ զբաղեզերումդ ոչ գոլ, այս ինքն զմարդն ներանձնաւոր, յանդիմանէ ի ձեռն անկարելին բացածութեանց: Այսպէս եղելոյ՝ առնում զհակակայն բաղեզերմանն. որզոն՝ զոչ ոք մարդ ներանձնաւոր առնում. եւ մի յառաջարկութիւն, որ յառաջն էր որ ասէր, ամենայն մարդ կենդանի, եւ առնեմ երկրորդ ձեւ այսպէս. ոչ ոք մարդ ներանձնաւոր, ամենայն մարդ կենդանի, ժողովել ի մասնական բացասական, որպէս յերկրորդումն ձեւումն, ոչ ամենայն կենդանի ներանձնաւոր: Բայց աստ մանաւանդ այսպէս, ոչ ոք մարդ ներանձնաւոր, որ հակակայի սկզբան բաղեզերմանն: Եւ մի առաջարկութիւն սկզբանցն, ամենայն մարդ կենդանի. եւ ժողովել ի մասնական բացասական, ոչ ամենայն կենդանի, ներանձնաւոր ամենայն եւ ոչ ամենայն, եւ առնէ հակասութիւն, որում ոչ գոյ հնար ճշմարտակից լինել: Չայն եւ հակադարձութիւն բաղիաւաքման կոչեն: Եւ այսոքիկ յաղագս այսորիկ:

Բայց պարտ է ութ գլուխս ոմանս յառաջագոյն առնուլ յաղագս հակադարձութեան բանի, այս ինքն վարդապետութեան բաղիաւաքմանցն: Նախ՝ եթէ քանաբա՞ր ասի հակադարձութիւն, եւ յաղագս որո՞յ արդեօք այժմու բանս է: Երկրորդ՝ եթէ այս յաղագս որոյ այժմու բանս է՝ քանաբա՞ր, եւ յաղագս որո՞յ դիտաւորութեան: Երրորդ՝ սահմանել զնա յաղագս որոյ բանն է: Չորրորդ՝ քանաբար գոլն եւ հարկաւորն

եւ մարթն, քանզի զայլսն ոչ յիշէ՝ զկարելին եւ զանկարելին, եւ զհա՞րոյ ըստ իւրաքանչիւր ումեք ի սոցանէ պիտանանայ հակադարձութեան: Հինգերորդ՝ վասն է՞ր եթող զկարելոյն եւ զանկարելոյն հակադարձութիւնս: Վեցերորդ՝ զի՞նչ այնոքիկ՝ որք ցուցանին ի ձեռն հակադարձութեանցն: Եօթներորդ՝ զի՞նչ կարգաւորութիւն նոցին: Ութերորդ՝ ո՞րք ոմանք իցեն յառաջ բերեալքն տարակուսանք:

Արդ ութ ելոց զլիսոց առաջիկայ տեսութեանս զերիսն միայն յարադրէ: Նախ՝ եթէ քանաբա՞ր հակադարձութիւն ասի եւ յաղագս որո՞յ բանս: Արդ հակադարձութիւն եռակի ասի, կամ ի սահմանս, կամ յառինչսն. զոր եւ յարադրեաց ի Ստորագութիւնսն, յորժամ ասէրն, եթէ առինչքն առ ի հակադառնալն ասին, հայր՝ որդւոյ հայր, եւ որդի՝ հօր որդի. եւ կամ յառաջարկութիւնսն են, որպէս այժմու բանս: Այս առաջին զլուխ:

Երկրորդ զլուխ էր, եթէ այս որ յառաջարկութիւնս՝ յաղագս որոյ եւ այժմու բանս է, քանաբա՞ր, եւ յաղագս որո՞յ արդեօք է դիտաւորութիւն: Եւ սա նոյնպէս եռակի. քանզի կամ պարզ է, եւ կամ մարթելի, եւ կամ բաղիակադարձութեամբ:

Պարզ է, որ զորակն զնոյն պահէ, իսկ զկարգ սահմանացն փոխէ. որզոն՝ ոչ ոք մարդ քար, եւ ոչ ոք քար մարդ: Որակն նոյն մնաց, քանզի երկոքին բացասականք. իսկ կարգ սահմանացն փոխեցաւ միայն. քանզի ստորագեցեալն ենթակայ եղեւ, եւ ենթակայն ստորագեցեալ: Քանզի յորժամ ասեմք, ոչ ոք մարդ քար, մարդն ենթակայ է, իսկ քարն ստորագեալ. իսկ յորժամ ասեմք, եթէ ոչ ոք քար մարդ, քարն ենթակայ է, իսկ մարդն ստորագեալ:

Իսկ մարթելի հակադարձութիւն է, որ զորակն փոխէ, իսկ զկարգն սահմանացն զնոյն պահէ: Բայց մարթելի ասի ի նիւթոյն, յորոյ վերայ բնաւորեցաւ ճշմարտել. որզոն՝ մարթելի գոյ ամենայնում մարդուն արդար գոլ, որ է ստորասութիւն. եւ դարձեալ մարթելի գոյ՝ ոչ ումեք մարդուն արդար գոլ. որ է բացասութիւն: Ապա որակն փոխեցաւ, իսկ կարգ սահմանացն նոյն պահեցաւ. քանզի մնաց նոյն ստորագեցեալ, եւ նոյն ենթակայ:

Տարակուսեն ոմանք, եթէ վասն է՞ր որպէս զբացասութիւն էառ, եթէ մարթի ոչ ումեք մարդուն արդար գոլ. քանզի ի վերայ յեղենակաւ առաջարկութեանցն՝ յեղանակին ի բաց բարձեցելոյ լինի բացասութիւն: Արդ եթէ յեղանակաւ էր առաջարկութիւնդ՝ պարտ էր ասել, եթէ ոչ մարթի ամենայն մարդուն արդար գոլ: Լուծումն սորին, եթէ համագօրի այլուն առաջարկութեան, որ ասէ՝ ոչ հարկաւոր զոք մարդ արդար գոլ. քանզի մարթի ոչ ումեք մարդունն արդար գոլ՝ ոչ հարկաւոր զոք արդար գոլ:

Իսկ բաղիակադարձութեամբ է հակադարձութիւն, որ եւ զորակն փոխէ եւ զկարգ սահմանացն. որզոն՝ եթէ մարդ՝ եւ կենդանի, եթէ ոչ կենդանի՝ եւ ոչ մարդ. այս բաղիակադարձութեամբ հակադարձութիւն: Երկրորդ յեղանակ ստորադրականացն. եւ յորժամ զստորադրականացն բուռն հարկանիցէ, եւ յաղագս նորին ուսուցէ:

Արդ երկրորդ յեղանակ ստորադրականացն ի բաց բարձմամբ հետեւեցելոց բառնայ զառաջեցեալն, եթէ ոչ կենդանի եւ ոչ մարդ: Իսկ առաջինն դրութեամբ յառաջեցելոյ ներածէ զհետեւեցեալն, եթէ մարդ՝ եւ կենդանի, այլ արդ՝ մարդ, ապա ուրեմն եւ կենդանի: Բայց բաղիակադարձութեամբ ասի. վասն զի հանդերձ որակաւն

Եւ զկարգ սահմանացն փոխէ հակադարձութեամբ ոմամբ: Բայց այժմ յաղագս պարզ հակադարձութեան է բանս:

Երրորդ գլուխ էր՝ սահմանել զնոյն զինքն՝ յաղագս որոյ բանն է, որոյ սահմանն է այսպէս. «Պարզ հակադարձութիւն է՝ հաղորդութիւն երկուց նախադասութեանց առաջարկութեանց՝ ըստ իւրաքանչիւր երկոցունց սահմանաց որակին նոյնի մնացելոյ, իսկ կարգի սահմանացն փոխեցելոց, հանդերձ ճշմարտակցելովն»: Հաղորդութիւն փոխանակ սեռի յարառեալ գոյ. իսկ երկուց նախադասութեանց՝ ի սահմանս հակադարձութեան. քանզի նոքա ոչ աւարտաբար հաղորդին, այլ առընչեղ են. որգոն՝ հայր՝ որդւոյ հայր, եւ որդի՝ հօր որդի. զի յորդի հակադարձուցէ: Որպէս անդ ի յանգիցելոյն հակադարձեցաւ. որգոն՝ ոչ ոք մարդ քար, եւ ի քարէն հակադարձութիւն եղել. եւ կամ յորժամ հանդիպի մարդոյն, յորժամ յանկմանն գտանի. իսկ այժմ որդւոյ հայր ոչ ոք ասի հայր: Քանզի եթէ էր տիրապէս հակադարձութիւն եւ որպէս արդարեւ զուգադարձութիւն այսպէս պարտ էր հակադարձիլ որպէս եւ ասացաւ: Բայց այժմ ասենք, որդի՝ հօր որդի. եւ դարձեալ ի բաղհաւաքմունս. վասն զի ոչ անդ հաղորդին երկու առաջարկութիւնք ըստ ամենայնումն, զորակն զնոյն պահելով, իսկ զկարգ սահմանացն փոխելով:

Այս առարկեցաւ վասն մարթելոյն հակադարձութեան, որ զորակն փոխէ, եւ վասն բաղհակադարձութեան, այսպէս եւ զորակն փոխելով եւ զկարգ սահմանացն: Հանդերձ ճշմարտակցելովն. այս առարկի, զի մի մի ոմն յառաջարկութեանցն ճշմարիտ եղիցի, եւ միւսն սուտ: Բայց զի ոչ ասաց եւ ստակցելով. վասն զի ճշմարիտքն ոչ երբէք մարտնչին ընդ միմեանս. իսկ սուտքն՝ եւ ճշմարտումն եւ ինքեանց մարտնչին. որգոն՝ ամենայն մարդ շնչէ, ճշմարիտ է: Արդ որք մարտնչին, են երկու առաջարկութիւնք, ոչ ամենայն մարդ շնչէ, եւ ոչ ոք մարդ շնչէ. որք եւ միմեանց մարտնչին. եւ դարձեալ ոչ ամենայն մարդ գնայ. եւ ճշմարիտ առաջարկութեանս այսմիկ մարտնչին այլք երկուք, ամենայն մարդ գնայ, եւ ոչ ոք մարդ գնայ. այլ եւ միմեանց մարտնչին, քանզի ամենայն՝ ոչ ումեքին ընդդէմ է:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով են առաջիկայ պրակք  
ՊՐԱԿՔ ԺԳ

Չորրորդ գլուխ առաջադրեցելոց՝ քանաբար ասի գոլն, եւ հարկաւորն, եւ մարթն: Արդ գոլն երկակի է. կամ այն՝ որ զսոսկ էութիւն յայտնէ, եւ զթարց յեղանակի առաջարկութիւնս. վասն որոյ եւ Յաղագս մեկնութեան ճառեաց եւ աստ. եւ կամ զվճարեալ մարթն, զորմէ բուռն հարցէ յառաջագոլով խառնարկութիւնսն. եւ զորմէ՞ արդեօք աստ զգոլոյ բուռն հարկանէ: Եւ ասենք, եթէ զայնմանէ՝ որ զսոսկ էութիւն յայտնէ. քանզի ինքն իսկ հակորոշեաց զգոլն յայլոց յեղանակաց՝ ասելով, եթէ Ամենայն նախադասութիւն կամ գոլ է, կամ մարթ, կամ հարկաւոր. որպէս զի ասէր, եթէ ամենայն առաջարկութիւն կամ յեղանակաւ է, կամ թարց յեղանակի, եւ ի Յաղագս մեկնութեան առաջարկութեան է բան. յայտնելով ինչ ումեքումն գոլ, եւ ինչ ումեքումն ոչ գոլ. զի եթէ գոլն այժմ զվճարեալ մարթն յայտնէր, թողոյր արդեօք զյեղանակաւ առաջարկութիւնսն. եւ խորթանային երկոքեան իրողութիւնքն Արիստոտէլի յառաջիկայս որպէս ոչ ուսուցեալ զհակադարձութիւնսն զգոլոցն առաջարկութեանցն, եւ Յաղագս մեկնութեան՝ որպէս ոչ զամենայն առաջարկութիւն սահմանեալ: Այլ եթէ

գոլոյն այժմ զսոսկ եութիւն յայտնելոյ, նախ զհակադարձունսն վճարելոյ մարթին ասէ գոլոյ, որ ուսուցէ ապա զնորա հակադարձութիւնսն: Եւ ասենք եթէ եթող զայսոսիկ, որպէս պարունակեցեալսն ընդ հարկաւորումն: Քանզի եւ վճարեալ մարթն է հարկաւոր: Ընդ այսոսիկ եւ նշանակութիւնք գոլոյն:

Իսկ հարկաւորն, եւ նա զանազան գոյ. կամ յարագոյ, եւ կամ լինելոց. որպէս ի վերայ եղիցին. եղիցի ամառն, եղիցի ձմեռն: Իսկ յարագոյ, կամ մշտնջենաւոր, կամ ապականելի: Մշտնջենաւոր՝ միշտ աստուածայինն բարի. միշտ արեգակն լուսաւորէ. միշտ հուր ջեռուցանէ. իսկ ապականելի՝ հանդերձ առորոշմամբ եղիցի. եթէ ենթակա՞յն եղիցի, եթէ ստորոգիցելովն եղիցի. եթէ ենթակայն, եթէ Սոկրատէս շնչէ՝ եղիցի, եթէ ստորոգելովն, եթէ Սոկրատէս լուանի, ցորքան գոյ նմա լուանիլն:

Եւ վասն որո՞յ արդեօք հարկաւորի այժմ տրամաճառէ: Ասենք, եթէ յաղագս միշտ եւ նոյնպէս ունելոյն. ընդ այսոսիկ եւ զանազանութիւնք հարկաւորին: Իսկ մարթն՝ նա եռակի. կամ ի նուազն, կամ ի յոլովն, կամ ի հանգէտն: Ի նուազն՝ որպէս բախտացի. քանզի պակաս ոք ի փորել ինչ եգիտ գանձ. իսկ ի յոլովն՝ բնութիւն, եւ նորին նմանող՝ արհեստ. քանզի յոլով՝ հնգամատեան առէ բնութիւն, եւ արհեստ՝ յոլով հանդիպի իւրում դիտաւորութեան. իսկ ի հանգէտն՝ մարդկային նախառութեան, քանզի ի մեզ է լուանիլն եւ ոչ լուանիլն: Եւ վասն որո՞յ արդեօք նշանակեցելոցս այժմու բանս: Եւ ասենք, եթէ այժմ զայն առնու՝ որ ի յոլովն է. քանզի արհեստական է եւ կարելի, ընդ մակացութեամբ դասեալ ըստ գիտութեան: Ընդ այսոսիկ եւ չորրորդ գլուխն:

Չինգերորդ գլուխն, յորում խնդրենք, եթէ վասն է՞ր եթող զհակադարձութիւնս կարելոյն եւ անկարելոյն: Եւ ասենք եթէ զկարելոյն եթող, որպէս պարունակեցեալս յայնցանեաց, որք մարթին գոլ. իսկ զանկարելին եթող, վասն զի հակադարձի նոյնք գոն հարկաւորին առաջարկութեանցն, եւ բացասութիւնք բացասութեանց: Քանզի հանգիտագոր է ի փոխադրութենէ ստորասութիւն անկարելոյն պարզումն ստորասութեան հարկաւորին. որզոն՝ անկար է ոչ գոլ. հարկաւոր է գոլ. քանզի անկար ոչ գոլոյն հարկաւոր գոլ է. եւ բացասութիւն բացասութեան, ոչ անկար է ոչ գոլ. ոչ հարկաւոր գոլ: Ընդ այսոսիկ եւ հինգերորդ գլուխն:

Վեցերորդ գլուխն, եթէ ո՞յք ոմանք են՝ որք ցուցանին ի ձեռն հակադարձութեանցն: Եւ ասենք, եթէ գիտելն. վասն զի ցուցանիւր ի ձեռն հակադարձութեանդ տակաւին ի վերայ գոլոյն եւ հարկաւորին յեղանակի՝ եթէ ընդհանուր բացասութիւն առ ինքն հակադարձի. որզոն՝ ոչ ոք մարդ քար, եւ ոչ ոք քար մարդ: Իսկ ընդհանուր ստորասութիւն առ մասնականն. որզոն՝ ամենայն մարդ կենդանի, եւ իք կենդանի մարդ: Իսկ մասնական բացասութիւն՝ ոչ առ ինքն, եւ ոչ առ այլ. որզոն, ոչ ամենայն մարդ կենդանի, եւ ոչ ամենայն կենդանի մարդ, ոչ ճշմարտակցէ, եւ ոչ ստակցէ. եւ ոչ է հակադարձութիւն: Այսոքիկ ի վերայ գոլոյն եւ հարկաւոր յեղանակին՝ այդպէս ունին, որպէս ասացաւդ:

Իսկ ի վերայ մարթին ստորասութիւնք նոյնպէս ունին. իք մարդ գնայ, եւ իք գնայն մարդ: Իսկ բացասութիւն ստորասութեան՝ ներհակաբար ունին. քանզի ընդհանուր բացասութիւն, որ երբեմն հակադարձիւր առ ինքն ի վերայ գոլոյն, եւ հարկաւոր յեղանակին, այժմ ի վերայ մարթին ոչ հակադարձի, եւ ոչ առ ինքն հակադարձի: Քանզի ընդհանուրն ի վերայ մարթին նիւթոյ՝ ոչ երբէք ճշմարտէ. բայց

մասնական բացասութիւն՝ որ երբեմն ոչ հակադարձիւր ի վերայ գոլոյն եւ հարկաւոր յեղանակին, այժմ ի վերայ մարթին հակադարձի. որոգն՝ ոչ ամենայն մարդ գնայ, եւ ոչ ամենայն գնայն մարդ:

Ընդ այսոսիկ հանդերձ աստուծով եւ առաջիկայ պրակք  
ՊՐԱԿՔ ԺԴ

«Ամենայն նախադասութիւն կամ ի գոլոյն է, եւ կամ ի հարկէ գոլոյն, եւ կամ ի մարթելոյն»: Եօթներորդ գլուխ՝ զի՞նչ է կարգ հակադարձութեանցն. որոց այսպէս եւ ըստ այսմ օրինակի ճանաչի կարգ: Նախադասեաց զգոլն յառաջ քան զհարկաւորն եւ զմարթն, որպէս զառանց յեղանակի, այնոցիկ՝ որք յեղանակի ենն. իսկ զհարկաւորն քան զմարթն. վասն զի միշտ եւ նոյնպէս ունի ըստ հակադարձութեանցն գոլումն: Դարձեալ ի հակադարձութիւնս այսոցիկ յառաջագոյն դասեաց զընդհանուր բացասութիւն քան զընդհանուր ստորասութիւն. ոչ միայն զի հակադարձի, եւ առ ինքն հակադարձի, այլ եւ զի պիտանի է հակադարձութիւն նորա այլոցն հակադարձութեանց: Իսկ զընդհանուր ստորասութիւն յառաջագոյն դասեաց քան զմասնական ստորասութիւն. թպէտ եւ զնա պարտ էր յառաջագոյն դասել. ոչ որպէս առ ինքն հակադարձելով, այլ որպէս հանուր քան զմասնական: Իսկ զմասնական ստորասութիւն յառաջագոյն դասեաց քան զմասնական բացասութիւն. վասն զի մասնական բացասութիւն ամենեւին ոչ հակադարձի ի վերայ գոլոյն եւ հարկաւոր յեղանակին: Ընդ որս եւ է եօթներորդ գլուխն:

Ութերորդ գլուխ՝ տարակուսանք ոմանք: Նախ՝ եթէ զիա՞րդ ասես, ով Արիստոտէլ, եթէ ընդհանուր բացասութիւն առ ինքն հակադարձի. քանզի ի բազում իրս ոչ այդպէս գտանենք. որոգն՝ զի թէ ոչ մի դո՞ւմ զդանակ հատանէ, եւ ոչ մի դանակ զդո՞ւմն հատանէ. եւ եթէ ոչ որմ ի ցցում է, եւ ոչ ցից յորմում է. եւ եթէ ոչ մի կարաս ի գինւոջ, եւ ոչ մի գինի ի կարասում: Արդ այսոքիկ ամենայն հակադարձութիւնք բացասութիւնք զոն առ ինքն հակադարձելոյ, եւ պարտ էր ճշմարտակցել, սակայն ոչ ճշմարտակցին: Այսք երեք տարակուսանք, որոց մի լուծումն է այս, եթէ ոչ է ողջաբար բոլոր ստորոգիցելոյն. քանզի պարտ էր ասել այսպէս, ոչ մի դո՞ւմ զդանակ հատանէ, եւ ոչ մի ինչ՝ որ զդանակն հատանէ՝ դո՞ւմ է. այլ կամ խարտոց է, եւ կամ այլ ինչ այսպիսի: Եւ դարձեալ՝ վասն զի եւ ոչ մի որմ ի ցցում է, եւ ոչ ինչ որ ի ցցում է՝ որմ է, այլ չուան է, եւ կամ պարան. եւ վասն զի ոչ մի կարաս ի գինւոջ, եւ ոչ ինչ որ ի գինւոջ՝ կարաս է, այլ հատիճ, եւ կամ թին է:

Բայց տարակուսի եւ այլ տարակուսանս. եթէ վասն զի ոչ կենդանին՝ ոչ մարդ, ոչ մարդն՝ ոչ կենդանի, ծի եւ կամ եզն: Այլ տարակուսանք, եթէ վասն զի ոչ մի գոյացութիւն ի սպիտակումն, այն ինչ եւ ոչ մի սպիտակ ի գոյացութեանն. եւ ո՞ւմ արդեօք ստորոգեսցի սպիտակն, եւ կամ յորո՞ւմ ենթակայցէ, եթէ ոչ ի գոյացութիւնս:

Երրորդ տարակուսութիւնս այսպէս. որ ոչ է ի տեղւոջ՝ ոչ կայ, եւ ոչ կացեալն՝ ոչ է ի տեղւոջ: Եւ զիա՞րդ է այս ճշմարիտ, եթէ հանդիպի գնալով: Լուծումն այսոցիկ մի: Առաջնոյն, եթէ ոչ է պարտ զուրացականն ի հակադարձութիւն առմերձիլ ի նենթակայումն եւ ընդհանուր կիտացն պատշաճելով. քանզի յորժամ ուրացութիւն ունին, եւ ենթակայն եւ ստորոգեալն, պարտ է զերկուս ուրացութիւնս ստորոգելում

առմերձիլ: Որգոն՝ ոչ կենդանին՝ ոչ մարդ, իսկ ոչ մարդն՝ ոչ կենդանի. քանզի ուրացութիւնք զմիմեանս ի բաց բառնալով՝ մի ստորասութիւն առնեն. ոչ ոչ կենդանի, այլ կենդանի: Դարձեալ, որ ոչ է ի տեղւոջ, ոչ կայ, եւ որ ոչն կայ՝ ոչ ի տեղւոջ է. եւ դարձեալ՝ ոչ մի գոյացութիւն յորակումն, այս արդէն իսկ սուտ. քանզի է յորակումն գոյացութիւն, թէպէտ եւ բնազանցաբար: Քանզի երկակի է ստորոգութիւն, մին ըստ բնութեան, իսկ միւսն բնազանցաբար: Ըստ բնութեան, յորժամ հանուրքն մասնականացն, եւ պատահմունք գոյացութեանց ստորոգին: Իսկ բնազանցաբար՝ յորժամ մասնականքն ընդհանուրցն, եւ գոյացութիւնք պատահմանցն ստորոգին:

Բայց տարակուսին եւ առ ընդհանրումն ստորասութիւն այսպէս. եթէ զիա՞րդ ասի ընդհանուր ստորասութիւն առ մասնական ստորասութիւն հակադարձիլ. քանզի եթէ այս ճշմարիտ՝ տարակուսեսցի որ արդէօք այսպէս: Եթէ վասն զի ամենայն որ կին գոյ՝ կոյս էր, եւ որ կոյս գոլով՝ կին էր. եւ վասն զի ամենայն աւագ՝ մանուկ էր, եւ որ մանուկ՝ աւագ էր: Լուծումն սորա, թէ եւ ոչ աստ ողջաբար առաւ ստորոգելովն ի հակադարձիլն. Ամենայն կին կոյս էր. քանզի պարտ էր այսպէս հակադարձել. ամենայն կին կոյս էր, եւ որ կոյս գոլով յառաջն՝ կին է. եւ ամենայն աւագ՝ մանուկ էր, եւ որ մանուկ գոլով յառաջն՝ աւագ է:

Տարակուսին եւ այլ տարակուսանս այսպէս. եթէ զիա՞րդ ասէ, եթէ մասնական բացասութիւն ոչ հակադարձի՝ ոչ առ ինքն եւ ոչ առ այլ, զի ոչ հակադարձի առ հանուր ստորասութիւն, որպէս ընդհանուր ստորասութիւն առ մասնական ստորասութիւն. որգոն՝ որպէս յորժամ ասէ որք, ոչ ամենայն կենդանի՝ մարդ, ամենայն մարդ՝ կենդանի: Լուծումն այսորիկ. եթէ ոչ մնաց նոյն որակ. քանզի ոմն յառաջարկութեանց ստորասական է, իսկ ոմն բացասական, զոր ոչ պարտ է ունել պարզ հակադարձութեան. քանզի որակ միշտ զնոյն պահէ, բայց միայն զկարգ սահմանացն փոխէ: